

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐՋՆԹԵՐ ՄԱՐՏԱՅՐԱԷՐԻՆ ՄԱՍԻՆ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ինչպես մեր նախորդ համա-  
րով «Ֆրանսան Սալի ու Մուրնի  
Միջեւ» յօդուածի մէջ հաղորդած  
էինք լուրը, թէ ֆրանսայի Ազգային  
Ժողովը Դեկտեմբերի 22-ին լրջօ-  
րէն պիտի կատարէր «Ժողովրդա-  
կան շարժման միութեան» դեկա-  
վարներէն Վալերի Բուայէի ներ-  
կայացուցած ծանօթ օրինագիծի  
քննարկումը: Արդարեւ, համաձայն  
Ժողովը կատարեց իր քննարկումը  
եւ դրայէս ընդունեց բանաձեւը:

Ֆրանսայի Ազգային Ժողովը,  
որ դեռեւս 2001 թուականին արդէն  
իսկ նանչցած էր 1915-ի հայ ժողո-  
վուրդի դէմ Օսմանեան Թուրքիոյ  
գործադրած ճեղասպանութիւնը:  
Ներկայիս, Ազգային Ժողովը հիմն  
ունենալով Եւրոխորհուրդի այն մի-  
ջոցառումը, որ ան ֆրէական յան-  
ցագործութիւն կը դառնան որեւէ  
փաստօրէն իրագործուած ճեղաս-  
պանութեան մը ժխտումը, 6-ի դէմ  
44 ձայնով հաստատեց Վալերի  
Բուայէի ներկայացուցած ծանօթ  
օրինագիծը, որ հայ ժողովուրդի  
դէմ գործադրուած ճեղասպանու-  
թեան ուրացումը այսուհետեւ պի-  
տի համարուի ֆրէական յանցա-  
գործութիւն:

Վաւերացուած այս նոր օրի-  
նագիծի համաձայն, որեւէ անձ, որ  
կ'ուրանայ օրէնքով փաստուած ճե-  
ղասպանութիւն մը, ենթակայ պի-  
տի դառնայ քառասուն հինգ հա-  
զար եւրօ տուգանքի եւ պիտի դա-  
տապարտուի մէկ տարուայ ազա-  
տագրկումի:

Ինչպէս արձագանգած էինք  
մեր նախորդ համարին մէջ, Թուրքի-  
ոյ Վարչապետ Էրտողան, Ֆրան-  
սայի Ազգային Ժողովի գումար-  
ման նախօրեակին, աչ ու անեակ  
սպառնալիքներ կարդաց ֆրանսա-  
յի դէմ: Ազգային Ժողովը եթէ ճե-  
ղասպանութեան ժխտումը ֆրէա-  
կան յանցագործութիւն ընդունիլ  
առաջարկող փաստաթուղթ՝ օրա-  
կարգի վրայ պահէ առ ի քննութիւն  
ու վաւերացում՝ Թուրքիոյ եւ ֆրան-  
սայի ֆաղափական, տնտեսական,  
մշակութային, նաեւ՝ ֆրանսայի  
համար խիստ կարեւոր նշանակու-  
թիւն ունեցող այլ հսկայական եկա-  
մուտներ ապահովող շինարարա-  
կան, փոխադրական, գինական եւ  
ապահովագրական ընկերութիւն-  
ներ, պիտի կրեն շատ լուրջ եւ  
անդարմանելի հետեւանքներ,  
որոնց համար պատասխանատու  
պիտի նկատուի ֆրանսա:

Հիմա, յանուն արդարադա-  
տական, մարդասիրական եւ հա-  
մամարդկային բարձրագոյն ար-  
ժէքներուն, նաեւ՝ նոր ցեղասպա-

Շաբ.ը էջ 18

## ՍԱՐՔՈՋԻ. «ԹՈՒՐԹԻԱ ՊԵՏՔ Է ՅԱՐԳԷ ՄԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ»

Դեկտեմբեր 22-ին, Ֆրանսա-  
յի Ազգային Ժողովը վաւերացուց  
Հայոց Յեղասպանութեան Ժխտու-  
մը քրէականացնող օրինագիծը:

Այս օրինագիծի համաձայն,  
Ֆրանսայի մէջ Հայոց Յեղասպա-  
նութիւնը ժխտողներուն մինչեւ  
մէկ տարուան ազատազրկում կը  
սպառնայ եւ 45.000 եւրօ տուգանք:


Պաշտօնական Անգարան ան-  
միջապէս արձագանգեց Ֆրանսայի  
Ազգային Ժողովի կողմէ օրէնքի  
ընդունման, տուն կանչելով Փարիզի  
իր դեսպանը:

Ֆրանսայի նախագահ Նիքոլա  
Սարքոզի կոչ ըրաւ Թուրքիոյ՝  
փոխադարձաբար յարգելու գիրար  
տեսակէտը:

«Ես կը յարգեմ մեր թուրք  
բարեկամներու տեսակէտները: Ան  
մեծ երկիր է, մեծ քաղաքակրթու-  
թիւն է, եւ իրենք ալ պէտք է  
յարգեն մեր տեսակէտները», -  
«Ֆրանսիբես» լրատուական գոր-  
ծակալութեան համաձայն, յայտա-  
րարած է Սարքոզի:

«Ֆրանսան դասեր չի տար  
ոեւէ մէկուն, սակայն չուզեր նաեւ,  
որ ուրիշներ դաս տան իրեն», -  
չեշտած է Ֆրանսայի դեկավարը:

Արձագանքելով Ֆրանսայի  
Ազգային Ժողովի ընդունած օրի-  
նագիծին, Թուրքիոյ վարչապետ  
Ռեջէփ Էրտողան մեղադրած է  
Ֆրանսային իր նախկին գաղութ



Հայկական ճեղասպանութեան  
ժխտումը դատապարտող օրէնքի  
հեղինակ, Երեսփոխան Վալերի  
Բուայէ

Այճերիոյ մէջ «ցեղասպանու-  
թիւն» գործադրելու մէջ:

Թուրքիոյ վարչապետը, Ֆրան-  
սայի նախագահին խորհուրդ  
տուած է այճերիացիներու «կոտո-  
րածի» մասին «հարցնել իր հօրը,  
որ այնտեղ ծառայած է Ֆրանսա-  
կան լեգէոնէն ներս»:

Սարքոզի ըսած է. - «Բոլոր  
հանգամանքներու մէջ, մենք պէտք

Շաբ.ը էջ 4

## ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԴԱՐՁԵԱԼ ՉԷ ԱՅՅԵԼԱԾ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐՂ



Մահմուտ Ահմատինէժատ եւ Սերժ Սարգսեան Երեւանի մէջ

Դեկտեմբեր 23-ին, պաշտօ-  
նական այցով Հայաստան ժամանց  
Իրանի Իսլամական Հանրապետու-  
թեան նախագահ Մահմուտ Ահմա-  
տինէժատ:

Հայաստանի նախագահի  
նստավայրէն ներս, Իրանի նախա-  
գահի դիմաւորման պաշտօնական  
արարողութիւնէն ետք, տեղի ունե-  
ցաւ Սերժ Սարգսեանի եւ Մահ-  
մուտ Ահմատինէժատի առանձնազ-  
րոյցը, որուն յաջորդեց երկու եր-  
կիրներու պատուիրակութիւննե-  
րու մասնակցութեամբ ընդլայն-

ուած կազմով բանակցութիւններ:

Հայաստանի եւ Իրանի նախա-  
գահները հանդէս եկան միատեղ  
յայտարարութեամբ, գոհունակու-  
թիւն յայտնելով Հայաստանի Հան-  
րապետութեան եւ Իրանի Իսլամա-  
կան Հանրապետութեան միջեւ  
բարձր մակարդակի յարաբերու-  
թիւններուն կապակցութեամբ,  
որոնք հիմնուած են Հայաստանի  
եւ Իրանի ժողովուրդներու բազ-  
մադարեայ բարեկամութեան վրայ:

Շաբ.ը էջ 5

## «ԵՐԿԽՕՍՈՒԹԵՆԵՆ ԵՏՔ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԴԱԴՐԵՑԱՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ».- ՌԻՉԸՐՏ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

2011-ը երկխօսութեան տարի  
էր եւ այն յատկապէս կարեւոր էր  
քաղաքական մշակոյթի փոփոխ-  
ման տեսանկիւնէն: Լրագրողնե-  
րու հետ հանդիպման ընթացքին  
նման կարծիք յայտնեց քաղաքա-  
պէս Ռիչըրտ Կիրակոսեան:

«Երկխօսութիւնը ինքնին  
կարեւոր երեւոյթ է, եւ մենք  
ազգային կարեւորութեան հարցե-  
րուն շուրջ պէտք է աւելի յաճախ  
երկխօսինք: Երկխօսութեան ար-  
դիւնքով լաւացան ընդդիմութիւն-  
իշխանութիւն յարաբերութիւննե-  
րը: Ընդդիմութիւնը կառավա-  
րութեան համար դադարեցաւ վտանգ  
ներկայացնել: Ընդդիմութեան յատ-  
կապէս կարեւոր էր այն, որ կրցաւ  
իշխանութիւնները ներգրաւել երկ-  
խօսութեան մէջ», - ըսաւ ան:

Կիրակոսեան յոյս յայտնեց, որ  
2012-ին Հայաստանի համար կ'ըլ-  
լայ ժողովրդավարութեան տարի,  
որ առաջին հերթին առնչուած է  
առաջիկայ խորհրդարանական ընտ-  
րութիւններուն հետ:

«Յառաջիկայ ընտրութիւննե-  
րը նախ կարեւոր են անով, որ  
առաջինն են 2008-ի ընտրութիւն-  
ներէն ետք: Կը ստեղծուի նորընտիր  
խորհրդարան որ կ'արտացոլէ քա-  
ղաքական իրական կեանքը:

Ռիչըրտ Կիրակոսեան հե-  
տաքրքրական համարեց նաեւ քա-  
ղաքական ինդիւրներու երեւոյթը,  
որ կ'ընթանայ ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի  
միջեւ: Խնդիրի յառաջացումը  
Ռիչըրտ Կիրակոսեան գնահատեց  
այն տեսանկիւնէն, որ իշխանական  
փակ համակարգը վերջապէս աւե-  
լի բաց կը գործէ:

## ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԾԵԾԿՈՏՈՒՔԸ ԲԵԹՅԵՂԵՄԻ ՄԷՋ

Հայ եւ Յոյն ուղղափառ հոգե-  
ւորականներու միջեւ, Դեկտեմբե-  
րի 28-ին ծեծկառուք տեղի  
ունեցած է Բեթհեղէմի Քրիստոսի  
Մանդեան եկեղեցիէն ներս:

Պաղեստինի ոստիկանութիւնը  
ստիպուած միջամտած է հոգեւո-  
րականներու վէճին, երբ այն վե-  
րածուած է լուրջ կռիւի:

Հոգեւորականները վիճած են  
եկեղեցիէ ներս իրենց յատկացուած  
տարածքի շուրջ: Մօտ 100 հոգե-  
ւորականներ եւ վանականներ՝ զին-  
ուած ցախաւէրներով, կռուած են  
եկեղեցոյ մաքրութեան ժամանակ:

Պաղեստինցի ոստիկանները  
մահակներով եւ վահաններով վե-  
րականգնած են կարգուկանոնը:

# ՍԱՐԳՍԵԱՆԸ «ՄԱՔՐԻՌԻՄ» Է

## ՀԱՅԿ ԱՐԱՄԵԱՆ

Հայաստանում տեղի ունեցող զարգացումներն ակնյայտ են դարձնում, որ երկրում դանդաղ, բայց հետեւողական մի գործընթաց է իրականանում, որը կարելի է բնորոշել որպես «աւազակապետութեան կազմաքանդում»: Ներքիշխանական քառանկյունը աւտորոշուած թիւերը, քաղաքացիական շարժումների ակտիւութիւնն ու արդիւնաւէտութիւնը, իրաւական նորմերի ակնյայտ ներդրումը հասարակութեան կեանքում դրա վառ ապացոյցն են:

Տուեալ դէպքում, «աւազակապետութեան» տակ պէտք է հասկանալ ոչ միայն իշխանութիւնը եւ նրա հովանու ներքոյ գտնուող բիզնես-քաղաքական համակարգը, այլեւ քաղաքական ուժերը լայն սպեկտրով, այդ թւում՝ ընդդիմադիր: Այսինքն, այն ամէնը, ինչը տարբեր կոնֆիգուրացիաներով խորհրդանշում է նախորդ 20 տարուայ Հայաստանը եւ ներկայում դարձել է անհամարժէք ներքին ու արտաքին զարգացումներին:

Հայաստանում ձեւաւորուած համակարգը բաւական բարդ է ապամոնտաժել: Սկիզբ առնելով անցեալ դարի 90-ականներին ու բիւրոկրատիայով վերջին տասնամեակում, այն փաստացի դարձել է պետութիւն պետութեան մէջ: «Թղթի վրայ գրանցուած» պետութիւնը դարձնելով ցուցանակ, ստեղծուել էր «իրական» պետութիւնը՝ իր սեփական օրէնքներով ու պայմանաւորուածութիւններով, ստուերային պիւտձէով ու քարոզչութեան գործիքներով, սեփական անվտանգութեանը ծառայեցնելով երկրի իրաւապահ եւ ուժային կառուցները: Նման համակարգն անխոցելի է նաեւ այն առումով, որ փաստացի ողջ հասարակութիւնն այս կամ այն կերպ ներգրաւուած է համակարգի պայմանաւորուածութիւնների մէջ, որը ներառում է կենսագործունեութեան բոլոր ոլորտները:

Նման համակարգերն ապամոնտաժելու տարբեր ձեւեր կան: Դրանցից մէկն, օրինակ, այն է, երբ հասարակութեան մի մասը փորձում է զուգահեռ ստեղծել այլ համակարգ, որն իր որակական յատկանիշներով գերազանցում է «աւազակապետութիւնը»: Սակայն, քանի որ հայ հասարակութիւնը, ինչպէս վերը նշուեց, գրեթէ լիովին ներգրաւուած է եղել «աւազակապետութեան» օրէնքի մէջ եւ իր հիմնական որակներով համահունչ է համակարգին, ապա այս ճանապարհը Հայաստանի դէպքում փաստացի բացառու է: Դրա վկայութիւնը դարձաւ Տէր-Պետրոսեանի գլխաւորած շարժման մարտնչը որպէս այդպիսին եւ այն սովորական կուսակցութեան վերածուելը:

Միւս ճանապարհը ներքիշխանական գործընթացներն են, աւելի ճիշտ՝ համակարգի միջից մէկ սեգմենտի առանձնացումը եւ միւսների դէմ դուրս գալը: Այս տարբերակը Հայաստանում փորձեց Ռոբերտ Քոչարեանը «Բարգաւաճ Հայաստան» նախագծով: ԲՀԿ-ն, կենտրոնացնելով ֆինանսական եւ կադրային բաւական լուրջ ռեսուրս, 2007 թ. խորհրդարանի ընտրութեանը ասպարէզացրց պէտք է դուրս մղեր Հանրապետական կուսակցութեանը, որտեղ այդ ժամանակ կենտրոնացուել էր Հայաստա-

նի քրեաօլիգարխիկ գրեթէ ողջ ռեսուրսը: Սակայն Սերժ Սարգսեանին յաջողուեց խափանել այդ ծրագիրը, իսկ յետագայում նաեւ՝ տապալել ամբողջութեամբ, արդէն զբաղեցնելով նախագահի աթոռը:

Ներկայում, Սերժ Սարգսեանը փաստացի հայ հասարակութեանը եւ միջազգային հանրութեանը ներկայացնում է, որ ինքն է ստանձնել «աւազակապետութիւնը» կազմաքանդելու գործը: Սակայն, «աւազակապետութիւնը» արդէն չի ենթադրում միայն ՀՀԿ-ն, այլ ամբողջ համակարգը, եւ ստեղծուել է մի իրավիճակ, երբ Սերժ Սարգսեանը գնալով մնում է միայնակ: Շատերն այս հանգամանքը նկատի առնելով կառուցում են քաղաքական սխեմաներ, որոնց իմաստն այն է, որ Սերժ Սարգսեանը չի տիրապետում իշխանական համակարգին, նա բոլորին իր դէմ է հանել, ինչը յանգեցնելու է նրա տապալմանը: Եւ իսկապէս, Սերժ Սարգսեանը ինդիւրներ ունի ոչ միայն ընդդիմութեան հետ, այլեւ իշխանական համակարգը կազմող սեգմենտների հետ, այդ թւում կոալիցիայի գործընկերների, օլիգարխիկ եւ քրէականացուած շրջանակների հետ:

Եթէ խնդրին մօտենանք Հայաստանում ներքաղաքական կեանքի զարգացումների վերջին 20 տարուայ տրամաբանութեամբ, ապա դա իսկապէս այդպէս է: Եւ սակայն, ինդիւրն այն է, որ նոր ժամանակների տրամաբանութիւնը լիովին այլ է եւ ենթադրում է հենց «աւազակապետութեան կազմաքանդումը», որը պահանջում էն Հայաստանի հասարակութիւնը եւ աշխարհը:

Խնդրին այս տեսանկիւնից նայելու դէպքում ակնյայտ է դառնում, որ Սերժ Սարգսեանն իրականում հետեւողականօրէն «մաքրում» է: «Մաքրում» է կոալիցիոն գործընկերների, քրէականացուած շրջանակների, տեղական ու ռուսահայ խոշոր բիզնեսի, ընդդիմութեան հանդէպ ունեցած պարտաւորութիւններից, նրանց «տանիք» լինելու բեռից, «մաքրում» է սեփական կուսակցութեան հանդէպ պարտաւորութիւններից: Եւ ստեղծուել է մի իրավիճակ, երբ սեփական իշխանութիւնը պահպանելու համար նա ստիպուած է մի կողմ դնել 20 տարիների Հայաստանը՝ «աւազակապետութիւնը»:

Դժուար է ասել, արդեօք Սերժ Սարգսեանն ինքն է գնացել նման իրավիճակի ձեւաւորմանը, թէ հանգամանքներն են այդպէս դասաւորուել, քաղաքական ներքին ու արտաքին տեխնոլոգիաների կիրառման արդիւնքում: Սակայն էականն այն է, որ ստեղծուել է նման իրավիճակ, եւ նա յայտնուել է մի դերում, որը չկարողացան ժամանակին իրականացնել Ռոբերտ Քոչարեանը՝ «ԲՀԿ» նախագծով, եւ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ Համագրգային շարժումով:

Սերժ Սարգսեանն, ի տարբերութիւն Քոչարեանի ու Տէր-Պետրոսեանի, նահանջի ճանապարհ չուներ: Միւս կողմից, նրան չի յաջողուելու ստեղծել սեփական «աւազակապետութիւնը», որքան էլ ձգտի դրան, որովհետեւ դրան հասնելու ներքին ու արտաքին ռեսուրսը սպառուել է 2008 թ. Մարտի 1-ին: Այնպէս որ, 2012-ին Հայաստանում շատ անակնկալներ են սպասուում: «ԼՐԱԳԻ»

# ԱՄՓՈՓԱԳԻՐ ՏԱՐՈՒԱՅ ԱՄՓՈՓՈՒՄԸ՝ ՄԵԿ ԲԱՌՈՎ

## ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Այս օրերին ով չի ալարում՝ ամփոփում է անցնող տարին եւ արձանագրում «ձեռքբերումներն» ու «բացթողումները», բայց այնպէս է ստացուել, որ ամէն մէկը միայն իր «նեղ մասնագիտական» ոլորտն է ամփոփում եւ ըստ այդմ էլ՝ գնահատում անցնող տարին:

Էկոնոմիկայի նախարարութիւնն, օրինակ, մեծագոյն նուաճում է համարում այն, որ արդիւնաբերութիւնը մօտ 10 տոկոսանոց աճ է արձանագրել, Պարոյր Հայրիկեանի համար տարուայ կարեւորագոյն իրադարձութիւնն այն է, որ մի քանի կուսակցութիւններ հաւանութիւն են տուել իտէլական ժողովրդավարութիւն կառուցելու իր ծրագրին, դաշնակների համար կարող է մեծագոյն նուաճում լինել այն, որ Բրազիլիայի Սան-Պաուլուի նահանգի խուանուլուչեսկա գիւղը ճանաչել է Հայոց ցեղասպանութիւնը, Կոնգրեսի համար առանձնապատուկ կարեւորութիւն ունի քաղաքացիական պարտաւորութիւնների ազատ արձակումը եւ Սերժ Սարգսեանի պաշտօնակազմութեան իրաւաքաղաքական հիմքերի հրապարակումը, արտգործնախարարը շատ հանգիստ կարող է անցնող տարին յաջողուած համարել, որովհետեւ իր թշնամի մէկը չի քաշքշել (յամենայն դէպս՝ ուղիղ եթերում) եւ այլն:

Հարց է ծագում՝ իսկ ո՞վ պիտի անցնող տարին ամփոփի այն հարիւր հազարաւոր մարդկանց տեսանկիւնից, ովքեր որեւէ կուսակցութեան անդամ չեն ու տեղեակ էլ չեն, որ Հայաստանում բազմաթիւ կուսակցութիւններ կան, ովքեր Ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցերով չեն հետաքրքրուում ու թքած ունեն այն փաստի վրայ, որ պաշտօնական վիճակագրութեան համաձայն՝ անցնող տարում վարսավիրանոցների մատուցած ծառայութիւնների ծաւալն աւելացել է շուրջ 3 տոկոսով, ովքեր պարզապէս առաւօտից իրիկուն աշխատում են, եւ արդիւնքում՝ շատ աւելի վատ են ապրում, քան անցած տարի: Եւ ընդհանրապէս՝ եթէ անցնող տարում երկրի վիճակը կատաստրոֆիկ վատացել է, ի՞նչ «ձեռքբերումների» եւ «բացթողումների» մասին կարող է խօսք լինել: Ընդ որում՝ խօսքը հաւասարապէս վերաբերում է եւ իշխանութիւններին, եւ ընդդիմութեանը, որովհետեւ երկուսն էլ, ըստ իրենց յայտարարութիւնների, նպատակ ունեն իրերը դուրս բերել այս վիճակից (Իհարկէ՞ միանգամայն տարբեր ձեւերով), բայց փաստօրէն՝ երկուսն էլ ձախողուել են:

Իսկ ընդհանրապէս՝ Հայաստանի հիմնական պրոբլեմն այն է, որ «տարուայ ամփոփումներն» անկեղծ չեն: Չէ, խօսքն այն մասին չէ, որ մինչեւ վերջ անկեղծ լինելու դէպքում ընդդիմութիւնը կարող էր տարին ամփոփել մէկ նախադասութեամբ՝ «պրոլետարներ բոլոր երկրների, ներեցէ՞ք»: Ընդդիմութիւնն ինչ-որ յաջողութիւններ այնուամենայնիւ արձանագրել է: Խօսքն այն մասին է, որ մինչեւ վերջ անկեղծ լինելու դէպքում Սերժ Սարգսեանն ու նրա թիւմը կարող էին տարին ամփոփել ընդամենը մէկ բառով՝ «փայլուն»: Ինչո՞ւ: Որովհետեւ այսօր Հայաստանում գործող համակարգն այն-

պիսին է, որ իշխանութիւն ունենալը հնարաւորութիւն է տալիս տարեկան «վաստակել» մօտ մէկուկէս-երկու միլիարդ տոլար (ամենահամեստ հաշուարկներով): Այսինքն՝ Սերժ Սարգսեանի ու նրա թիմի համար իշխանութիւնը բիզնէս է, որն օրական «բերում է» մօտ 5 միլիոն տոլար: Եւ պատկերացրէ՛ք՝ անգամ ամենամեծարեւակաւ պայմաններում Սերժ Սարգսեանի այդ բիզնէսը ոչ մի օր կանգ չի առել, անխափան աշխատել է: Ուրիշ էլ ի՞նչ է պէտք յաջողակ բիզնէսմենին՝ տարին որպէս բարենպաստ գնահատելու համար: Աւելին. տարեկան բիզնէսային ալիսին էր, որ նա ըստ հոլթեան ապրում էր օրուայ հոգսով, իսկ հիմա նոյնիսկ լրջօրէն մտածում է յետագայ հինգ տարիների բիզնէս-ծրագրի մասին, այսինքն՝ անձամբ նրա համար տարին իսկապէս չափազանց յաջող է եղել:

Հիմա եթէ անմփոփում ենք իրավիճակը, բաւականին հետաքրքիր պատկեր է ստացուում: Փաստօրէն՝ 2011 թուականը պետութեան համար այնպէս է եղել, ժողովրդի համար այնպէս է եղել, ընդդիմութեան համար այնպէս է եղել, բայց անձամբ Սերժ Սարգսեանի ու նրա թիմի համար յաջող է եղել: Սա իր հերթին նշանակում է, որ Սերժ Սարգսեանի եւ պետութեան ու հասարակութեան շահերը տրամագծօրէն հակադիր են, եւ այս հակադրութիւնն ինչ-որ կերպ պիտի ստանայ իր լուծումը: Այսպէս թէ այնպէս՝ մի քանի ամսից ընտրութիւններ են, եւ ըստ երեւոյթի չենց այդ ժամանակ էլ տեղի կ'ունենայ հանգուցալուծումը: Ափսոս միայն, որ մինչեւ Մայիս դեռ շատ ժամանակ կայ: Օրը հինգ միլիոն տոլարով հաշուենք՝ տեսէ՛ք որքան վնաս է կրում պետութիւնը:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԹԸ ԱՐՇԱԿ ԳԱՉԱՆԵԱՆ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՔՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՐԿ ԹՈՒԹԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$120.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To MASSIS WEEKLY



ՐԱՅԱՍՏԱՆ

ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԸ Կ'ԱՌԱՋԱԴՐՈՒԻ ԶՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Հայ Ազգային Կոնգրեսի անդամ Սասուն Միքայելյանը պատրաստում է որպես թեկնածու մասնակցել 2012 թվականի Փետրուարի 12-ին կայանալիք Հրազդանի քաղաքապետի ընտրություններին: Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց ինքը Միքայելյանը՝ յաւելելով, որ եթէ արդար ընտրություններ անցկացուեն, ապա իր ընտրուելու հաւանականությունը կը կազմի «150 տոկոս»:



Հրազդանի քաղաքապետի թեկնածու Սասուն Միքայելյան

«Դէ ժողովուրդն է պահանջում, որ «մենք ուզում ենք փրկուենք», նոյնիսկ մարդիկ են եղել, որ ասել են՝ «տան մէջ մահանում ենք, եկէ՛ք՝ մեզ փրկէ՛ք»: Ես բարոյական իրաւունք չունեմ իմ թեկնածութիւնը չառաջադրելու», - ասաց ընդդիմադիր գործիչը:

Նշելով, որ իշխանութիւնները անընդհատ յայտարարում են, թէ Հայաստանում առաջիկայ ընտրություններն անցկացուելու են արդար ու թափանցիկ, Միքայելյանը շեշտեց, որ Հրազդանի քաղաքապետի ընտրությունները լաւ առիթ են նրանց յայտարարությունները կեանքի կոչելու համար:

«Մեր իշխանութիւնն է ասում՝ պէտք է արդար ընտրություն անի, մենք էլ գործովք ենք կանգնում: Մենք գնում ենք արդար ընտրութեան», - յայտարարեց Սասուն Միքայելյանը՝ շարունակելով. - «Ես էն չափանիշի, էն կալիբրի տղայ եմ, որ, գիտէք,

ամէն ինչի գնալու եմ: Ես էս իշխանութիւններից պահանջում եմ արդար ընտրութիւն: Թող բերեն դրսից յանձնաժողովների անդամներ դնեն, կանգնեն՝ մի անգամ էս երկրում արդար ընտրություններ կայանան: Իսկ եթէ յանկարծ գնան խախտումների, իմ ինքնասիրութիւնը, իմ ժողովրդի պահանջը էսօր թոյլ չի տա, որ իրենք էդքան կարողանան՝ անարդար ընտրություններ անցկացնեն: Ես ամէն ինչի գնալու եմ»:

Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Սասուն Միքայելյանը 2008 թվականի չեղարկուած իրազարձութիւնների կապակցութեամբ դատապարտուել էր 8 տարուայ ազատազրկման եւ համաներման մասին խորհրդարանի որոշմամբ ազատ արձակուեց այս տարուայ Մայիսի վերջին:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Դեկտեմբեր 26-ին Սերժ Սարգսեանի նստավայրի մօտ դարձեալ բողոքի ցոյց էին անում Գէորգ Չառուշ 14/3 հասցեում կառուցուող շէնքի «Նորաշէն» կողպերատիւի անդամները, որոնց բնակարանները տրամադրուել է ՀՀ ԱԺ պատգամաւոր Հերմինէ Նաղդալեանին: Մարդիկ պահանջում են իրենց օրինական գոյքը եւ հարցը չլուծելու դէպքում Սերժ Սարգսեանին սպառնում լքել երկիրը:



պարտքատէրերին, այդ թւում՝ ՀՀ պատգամաւոր Հերմինէ Նաղդալեանին:

«Մենք պարոն նախագահից ենք ինդրում՝ օգնիր մեզ ետ վերադարձնել մեր օրինական բնակարանները, քանի որ Հերմինէ Նաղդալեանը ոչ մի գիշումներ չի անում», - նշեց Շուշանիկ Աղաբաբեանը:

ՀՀ պատգամաւորի անունը շօշափուում է նաեւ մէկ այլ բնակարանային գործարքի դէպքում: Պատգամաւորի ամուսինը՝ Դաւիթ Բեգլարեանը Արարատի հարկային ծառայութեան պետն է, որը, ըստ բնակիչների, նոյնպէս տոկոսի դիմաց բնակարաններ է ձեռք բերել:

«Հերմինէ Նաղդալեանից պահանջում ենք մեր բնակարանները: Դեռ 8 բնակարան կայ նրա մօտ, որ ետ չի վերադարձրել, մնացած 6-ը վերադարձրել է բաւականին մեծ գումարների դիմաց՝ մարդիկ յաւելելով գումարներ են վճարել ետ վերադարձնելու համար՝ 10-20 հազար դոլար», - «Ա1+»-ին տեղեկացրեց Գէորգ Չառուշ 14/3 հասցէի բնակարանի սեփականատէր Շուշանիկ Աղաբաբեանը:

Տեղեկացնենք՝ Գէորգ Չառուշ 14/3 հասցէի բնակարանները «Նորաշէն 2007» կողպերատիւի տնօրէնը տոկոսների դիմաց յանձնել է

«ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻՑ ԿԱՆՈՒՄԾ Է ԼԻՆԵԼՈՒ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԻՆՏԵԳՐԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ»

2012-2013 թթ ընտրությունների մակարդակից է շատ բանով կախուած լինելու Հայաստանի եւրաինտեգրացման գործընթացը: Այս մասին այսօր՝ Դեկտեմբերի 26-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է «Եւրոպական ինտեգրացիա» կազմակերպութեան ղեկավար Կարէն Բեքարեանը: Նրա կարծիքով, եթէ խորհրդարանական (2012-ին) ու նախագահական ընտրությունները (2013-ին) անցկացուեն բարձր մակարդակով, դա կարող է հակամարտին արագացնել Հայաստանի եւրաինտեգրացման տեմպն ու որակը: Անդրադարձալով Հայաստանի ու Եւրամիութեան փոխգործակցութեանը՝ «Արեւելեան գործընկերութեան» ծրագրի շրջանակներում, Բեքարեանը նշել է, որ համագործակցութիւնը, թէեւ շատ դանդաղ, կայուն կերպով զարգացել է:

ՅՈՒԿ ԱՐԱՅԱՄԵԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉՍԿԱՍԾ ԲՅԿ-ԻՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ Է ՄԱՏՆՈՒՄ

ԱԺ նախկին նախագահ, ՀՀ շտաբի ղեկավար Հովիկ Աբրահամեանի կարծիքով ԲՀԿ-ն չի յաղթի խորհրդարանական ընտրություններում: Այս մասին այսօր՝ Դեկտեմբերի 27-ին, տնտեսագիտական համալսարանում լրագրողների հետ զրոյցում յայտարարեց Յովիկ Աբրահամեանը: Այնուհետեւ արձագանքելով ՀՀԿ-ԲՀԿ միասնական ցուցակի հնարաւորութեան հարցին նշեց, որ քաղաքականութեան մէջ չպէտք է ոչ մի բան բացառել, բաց նման հարց դեռ չի քննարկուել, եւ համոզուած է, որ առաջիկայում դա յայտնի կը լինի հանրութեանը:



ՀՀ շտաբի ղեկավար Յովիկ Աբրահամեան

Ըստ Յովիկ Աբրահամեանի, ՀՀԿ-ն այժմ զբաղուած է 2012 ընտրությունների կազմակերպական, նախապատրաստական աշխատանքներով: Նա կոչ արեց բոլորին, որպէսզի արթնանան, ուղքեր որ քնած են, կողմնորոշուեն, որովհետեւ Յունուարից սկսած իրենք մեծ աշխատանք են իրականացնելու եւ Հանրապետական կուսակցութիւնը, այն, ինչ պլանաւորել է, ծրագրել է, փորձելու են իրականացնել եւ յաջողութիւններ գրանցել 2012 թ. Մայիսի խորհրդարանական ընտրություններում: Հարցին, թէ հնարաւոր է, որ ինքն առաջադրուի մեծամասնական ընտրակարգով, Յովիկ Աբրահամեանը պատասխանեց, որ իր առաջադրուելու հարցը կ'որոշեն կուսակ-

ցութիւնով միասին, սակայն դեռ ոչ մի քննարկում չի եղել այդ հարցի շուրջ: Յովիկ Աբրահամեանն անդրադարձաւ նաեւ ԱԺ նոր նախագահ Սամուէլ Նիկողոսեանի յայտարարութեանը, թէ ԱԺ-ում նախկինում խախտումներ են եղել: «Ես նման յայտարարութիւնից տեղեակ չեմ, ես բացառում եմ, որ Նիկողոսեանը նման յայտարարութիւն անի: Աւելին՝ ես բացառում եմ, որ մենք որեւէ խախտում իրականացրած լինենք, իսկ ինչ վերաբերում է աշխատակազմի որոշ աշխատողների հեռանալուն, իրենք են որոշում, եւ ես բոլորի որոշումները յարգում եմ», - ասաց նա:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը ԵՒ ԶՅԴ-Ն ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՎԵՐԱՑՆԵԼ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԸ

«Ժառանգութիւն» եւ Հԅ Դաշնակցութիւն (ՀԅԴ) կուսակցութիւնները համատեղ յայտարարութեամբ են հանդէս եկել՝ կոչ անելով վերացնել խորհրդարանական ընտրութիւնների մեծամասնական ընտրակարգը:

Յայտարարութիւնում «Ժառանգութիւն»-ը եւ Դաշնակցութիւնը «ողջունում են խորհրդարանական եւ արտախորհրդարանական ուժերի վերջերս յայտարարած դիրքորոշումը՝ ազատ ու արդար ընտրությունների կազմակերպման եւ վերահսկման հարցում», եւ Ազգային ժողովի մեծամասնութեանն առաջարկում են «Ընտրական օրէնսգրքում համատեղ իրականացնել մէկ կոնկրետ փոփոխութիւն, այն է՝ վերացնել մեծամասնական ընտրակարգը՝ անցում կատարելով 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի»: Առաջարկուող փոփոխութեան

հիմնական նպատակներն են, ըստ երկու կուսակցութիւնների, պատգամաւորական բոլոր մանդատների համարժէքութեան եւ մրցակցային պայմանների հաւաստարարութեան ապահովումը, ընտրական գործընթացի ու խորհրդարանի մուտք գործող անձանց համար քաղաքական ուժերի պատասխանատուութեան մեծացումը, ընտրական գործընթացների վրայ ոչ քաղաքական եւ ոչ ընտրական գործօժանների ազդեցութեան նուազեցումը:

Յայտարարութեան հեղինակների կարծիքով, «համաձայնելով այս քայլին, իշխանութիւնները ցոյց կը տան իրենց պատրաստակամութիւնն ու քաղաքական կամքը՝ նախընտրական շրջանում ընդդիմութեան հետ համատեղ երկրում ձեւաւորելու ներհասարակական հանդուրժողականութեան եւ համերաշխութեան միտուորտ»:

«ՓԱՐԻՉԵԱՆ ՍՈՒՐԾ»Ի ՏՆՕՐԵՆԸ ԿԸ ԼՔԷ ԶԱՅՐԵՆԻՔԸ

Երեւանցիները շուտով կը գրկուեն իրենց ամենասիրելի վայրերից մէկից՝ «Փարիզեան սուրճ» սրճարանից: Քաղաքապետ Տարօն Մարգարեանի որոշմամբ՝ Աբովյան 23 հասցեում շուրջ 16 տարի գործող սրճարանը ապամոնտաժուելու է:

«Պարոն քաղաքապետն ինձ անձամբ զանգեց եւ ասաց, որ ինքը Փարիզեան սուրճի դէմ ոչինչ չունի եւ ինդրեց, որ ես մի քիչ սպասեմ՝ երկու ամիս եւ երկու ամիսից յետոյ, նորից անպայման կը դնենք Փարիզեան սուրճը», - «Ա1+»-ին ասաց վալերի-Աշխէն Գործուն-

եանը: Սփիւռ. քահայ գործարար կինը սպասել չի պատրաստուում, Դեկտեմբերի 29-ին հեռանում է հայրենիքից, որտեղ տարիներ շարունակ ներդրումներ է կատարել, իսկ այսօր խնդիրներ ունի հարկային մարմինների հետ՝ մօտ 80 մլն դրամի պարտք: Այն մարելու համար տիկին Գործունեանը վաճառել է Հայաստանում գտնուող իր սուրճի արտադրամասի գրեթէ կէսը:


«Արդէն 4-5 տարի է ես



# ԼՈՒՐԵՐ

## «ԵԹԵ ԹՈՒՐԹԻԱՆ ՉԻ ՈՒԶՈՒՄ 4 ՃԱԿԱՏՈՎ ՊԱՏԵՐԱԶՍԵԼ, ՊԵՏՔ Է ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ».-ԻՒՐՐԻՅԵԹ

Թուրքիայի յայտնի լրագրող, վերլուծաբան Մեհմեդ Ալի Բիրանդն իր հերթական հրատարակման մէջ անդրադարձել է Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմ պայքարում Թուրքիայի ոչ արդիւնաւէտ քաղաքականութեանը՝ առաջարկելով դրա փոխարէն քաղաքացիութիւն տալ Թուրքիա ներգաղթած հայաստանցիներին եւ վերակենդանացնել հայ-թուրքական գործընթացը:



Թուրքիայի յայտնի լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդ

Թրքական «Հիւրիէթ»-ում հրատարակած յօդուածում Բիրանդը նշել է, թէ հայերն այս ընթացքում կարողացան աշխարհին ընդունել տալ Հայոց ցեղասպանութիւնը, իսկ Թուրքիան չկարողացաւ դրանց պատասխանել եւ կորցրեց խողով:

«Աշխարհում որ խորհրդարանի մօտով անցնենք, մեր դէմքին հարուածում են ցեղասպանութեան յանցանքով: Հայերը պատրաստուած են իրենց ամենակարեւոր քայլն անել 2015-ին: Նրանք ցեղասպանութեան ճանաչումը կ'անցկացնեն ԱՄՆ-ում, որից յետոյ միւս երկրներն այն հեշտութեամբ կ'ընդունեն:

Հիմա կը տեսնէք, որ Ֆրանսիայի հետ մեր վէճը մի որոշ ժամանակ յետոյ մոռացուելու է: Օրակարգում լրիւ ուրիշ թեմաներ են յայտնուելու:

Խնդիրները աւելի խելացի լուծելու փոխարէն փորձում ենք մեր դիմացի պատերը քանդել: Միշտ այդպէս է եղել եւ չենք կարողանում ձեռքազատուել այդ սովորութիւնից: Եթէ ուզում ենք լաւ լրբերնգ անել, պէտք է Թուրք-

իայում անօրինական ապրող հայաստանցիներին քաղաքացիութիւն եւ աշխատելու իրաւունք տանք:

Միւս քայլը հայ-թուրքական ստորագրուած արձանագրութիւններն են: Մենք մեր ադրբեջանցի բարեկամների համար ետքայլ կատարեցինք: Եթէ արձանագրութիւնները ուժի մէջ մտած լինէին, ոչ Ֆրանսիան նման օրինազիծ կ'ընդունէր, ոչ էլ ԱՄՆ Սենատում այն կրկին կը գայ օրակարգ:

Եթէ Թուրքիան չի ուզում 4 ճակատով պատերազմել եւ Արեւմուտքի եւ իր միջեւ սեպ խրել, ի վերջոյ ստորագրուած հայ-թուրքական արձանագրութիւնների վերականգնանքովից այլ ուղի չի երեւում», -գրել է Մեհմեդ Ալի Բիրանդը:

## ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԿԱՐԳԱՒՈՐՈՒՄԸ` ԸՍՏ ՍԵՂԿԵԴԵՒԻ ԵՒ ԸՍՏ ԱԼԻԵՒԻ



Սարգսեան, Մեղվեղեւ եւ Ալիեւ

Անցած շաբաթավերջին Ղարաբաղի խնդրի կարգաւորմանը անդրադարձել են Ռուսաստանի ու Ադրբեջանի նախագահները: Բայց եթէ Դմիտրի Մեդվեդեւը համոզուած է, որ խնդրի կարգաւորումը հիմա հնարաւոր է եւ միայն՝ խողով ճանապարհով, իլհամ Ալիեւը նորից խօսել է ռազմական ճանապարհով հարցը լուծելու հնարաւորութեան մասին:

Մեղվեղեւը Ադրբեջանի հեռուստատուգիոյի (AzTV) հարցազրոյցում ասել է. - «Համաձայնութեան հեռանկարներ անտարակոյս կան: Իմ կարծիքով, դա [Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը] յետխորհրդային տարածքի միակ հակամարտութիւնն է, որը հիմա հնարաւոր է կարգաւորել: Ամէն ինչ կախուած է կողմերի բարի կամքից, դիմացինի հիմնաւորումները լսելու ցանկութիւնից»:

Նա ընդգծել է, որ կարգաւորման ճանապարհը միայն մէկն է՝ համաձայնութիւնը. - «Որովհետեւ համաձայնութեանը այլնորանք չկայ: Այլընտրանքը միայն վատն է՝ պատերազմը»:

Ռուսաստանի նախագահը նշել է, որ համաձայնութիւնը հնարաւոր է միայն փոխզիջումների հիմքով, իւրաքանչիւրը պէտք է անցնի իր ճանապարհը, եւ նա հաւաստիացրել է, որ Ռուսաստանը յետագայում եւս կ'օժանդակի դրան:

Ադրբեջանի նախագահ իլհամ Ալիեւը, մինչդեռ, յայտարարել է. - «Ադրբեջանի տարածքային ամբողջականութիւնը պէտք է վերականգնուի, բոլոր տեղահան-

ուածները պէտք է վերադառնան իրենց հայրենի հողերը: Լեռնային Ղարաբաղում, այդ թւում Շուշիում, Ադրբեջանի ինքնիշխանութիւնը պէտք է ամբողջութեամբ վերականգնուի»:

APA լրատուական գործակալութիւնը յայտնում է, որ Ադրբեջանի նախագահը այս յայտարարութիւնը արել է Լաչինից տեղահանուած 500-ից աւելի ընտանիքների համար նոր բնակավայրի բացման ժամանակ:

Իր խօսքում Ալիեւը նաեւ ասել է. - «Հիմա դիւանագիտական ջանքեր ենք գործադրում, բայց եթէ տեսնենք, որ դա արդիւնք չի տալիս, ապա ցանկացած պահի մենք պէտք է պատրաստ լինենք ռազմական ճանապարհով վերադարձնելու մեր հողերը»:

«Անհրաժեշտ պահին ադրբեջանական բանակը կասի իր խօսքը: Միջազգային իրաւունքի նորմերը մեզ այդ իրաւունքը տալիս են, պարզապէս մենք ցանկանում ենք առայժմ դա կատարել բանակցութիւնների միջոցով՝ միաժամանակ աւելացնելով մեր հզօրութիւնը: Այս տարիների ընթացքում մենք շատ աւելի ուժեղ ենք դարձել, մենք ռազմական հզօրներուժ ենք ստեղծել», - յայտարարել է Ալիեւն ու նորից կրկնել, թէ խնդրի արդարացի լուծումը միայն մէկն է՝ «Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան վերականգնումը»:

Ադրբեջանի նախագահը ասել է, թէ ինքն անձամբ լիովին համոզուած է, որ դա կը կատարուի:

## ԹՈՒՐԹԻԱ ՊԵՏՔ Է ՅԱՐԳԷ

Շարունակուած էջ 1-էն

է հանգիստ մնանք: Ֆրանսան արտօնութիւն չի խնդրել, Ֆրանսան ունի իր համոզմունքները, մարդու իրաւունքները եւ յարգանքը յիշատակի առջեւ»:

Միւս կողմէ, Հայկական Յեղասպանութեան ժխտումը դատապարտող օրէնքի հեղինակ, երեսփոխան Վալերի Բուալէ բազմաթիւ սպառնալիքներ ստացած է թուրքերէ: Բուալէ ֆրանսական հեռատեսիլի ալիքներէն մէկուն յայտնած է, որ մահուան եւ բռնաբարութեան սպառնալիքներ կը ստա-

նայ, - «Այս բոլորը դիս մեծապէս կը ցնցեն: Իմ կարծիքով պէտք է բողոքարկեմ: Այդպէս ալ պիտի ընեմ», - ըսած է ան:

Բուալէ Մոնդեան արձակուրդը կէս ձգելով ներկայացած է Փարիզի ոստիկանութիւն եւ բողոքի դիմում ներկայացուցած է: Բազմաթիւ լրատուամիջոցներ եւ հեռատեսիլի լրագրողներ ներկայ եղած են ոստիկանութեան շէնքին առջեւ: Պոլէրի facebook-ի էջին վրայ թրքերէն, անգլերէն եւ ֆրանսերէն բազմաթիւ հայհոյանքներով լեցուն հաղորդագրութիւններ գրուած են:

**ՄԱՍԻՍ**  
ԱՍԵՆԱԿԱՍԱՎԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ԴԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## «FORBES»-Ը ՍԱՐՏԻ 1-Ը ՃԱՆԱՉԵԼ Է ՏԱՍՆԱՍԵԱԿԻ ԱՍԵՆԱԿԱՍԱԿԱՅԱՐՈՅՑ ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՍԵՎԸ

«Forbes» ամսագիրը կազմել է նախորդ տասնամեակի ամենաաղմկալարոյց ընտրական իրադարձութիւնների ցանկը: Top 15-ն սկսում է 2003թ. Ռուսաստանի Պետդումայի ընտրութիւններից, երբ այդ երկրի ԿԸՅ նախագահը յայտարարեց, որ Չեչնիայում եւ Ինգուշեթիայում կայացած ընտրութիւններում քուէարկել են գոյութիւն ունեցող փաստացի ընտրողներից 11 տոկոս աւել մարդ:

Ցանկում տեղ գտած իրադարձութիւնների շարքում մանրամասը նկարագրուած է հայաստանեան Մարտի 1-ը: «Փետրուարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրութիւնների արդիւնքների հրատարակման յաջորդ օրը՝ փետրուարի 20-ին, պարտուած թեկնածու, առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի (21.50%) կողմնակիցները Երեւանի Ազատութեան հրատարակում կազմակերպեցին շուրջօրեայ բողոքի հան-

րահաւաքներ: Հանրահաւաքների մասնակիցների կարծիքով, ընտրութիւններն ուղեկցուել են մասսայական խախտումներով ուստի չեն կարող լեգիտիմ համարուել:

Մարտի 1-ի առաւօտեան Ազատութեան հրատարակի վրանային քաղաքը յարձակման ենթարկուեց ոստիկանութեան կողմից: Արդիւնքում սպանուեցին հանրահաւաքի ութը մասնակից եւ երկու ոստիկան: Ի պատասխան, տեղի ունեցան բողոքի նոր գործողութիւններ, որի մասնակիցները տառացիօրէն իրաւապահ ուժերին դուրս մղեցին քաղաքի ծայրամասեր: Մասսայական անկարգութիւնները կանխելու համար գործող նախագահ Ռոբերտ Բոչարեանը Մարտի 2-ին քսանօրեայ արտակարգ դրութիւն մտցրեց: Ընտրութիւնների արդիւնքները չվերանայուեցին:

Սերժ Սարգսեանը նախագահի պաշտօնն ստանձնեց Ապրիլի 9-ին»:

## «ՓԱՐԻՉԵԱՆ ՍՈՒՐՃ»Ի ՏՆՕՐԵՆԸ ԿԸ ԼՔԷ ԴԱՅՐԵՆԻՔԸ

Շարունակուած էջ 3-էն

պայքարում եմ եւ արդարադատութեան հետ, եւ հարկային մարմինների հետ: Ցանկացած նորմալ պետութիւն ժամանակ կը տար իր հարկատուին: Պետութիւնը, որն ունի փոքր տնտեսութիւն,

ինքը պէտք է ցանկանայ, որ հարկատուն մնայ եւ առողջ մնայ: Ես չեմ կարող մնալ Հայաստանում, որովհետեւ այդ միջոցները չունեմ: Երեւի խանգարում էի, որովհետեւ ես չեմ կարող սուս մնալ, ես բնաւորութեամբ Չղային մարդ եմ», - մեկնաբանեց տիկին Գործունեանը:



### ԱՄՆ ԴԵՄՊԱՆ ՄԵԹԻ ՊՐԱՅՁԱՅԻ ԴԻԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԵՋ ԱԲԱՐՏԱԾ Է

Ատրպէյճանի ԱՄՆ արտակարգ եւ լրագոր դեսպան Մեթիւ Պրայ-գայի դիւանագիտական գործունէ- ութեան ժամկէտը վերջ գտած է: Ինչպէս կը հաղորդէ ատրպէյ- ճանական «ԱՊԱ» գործակալու- թիւնը, այդ առնչութեամբ Ատր- պէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ այսօր ընդունած է Պրայգայն:



նախագահը կրնայ մարդու չի նշա- նակումներ կատարել միանձնեայ՝ առանց Ծերակոյտի հաւանութեան: Պարաք Օպամա անցած տա- րեկը շին օգտուեցաւ իր այդ իրա- ւունքէն՝ Ատրպէյճանի ԱՄՆ դես- պանի պաշտօնին հաստատելով Պրայգայի թեկնածու թիւնը: Սակայն, եթէ ծերակոյտա- կանները մինչեւ Դեկտեմբերի վերջ չհաստատէին Պրայգայի թեկնա- ծու թիւնը? Օպամայի վերոնշեալ հրամանը պիտի կորսնցնէր իր ուժը, եւ Պրայգա ստիպուած պիտի ըլլար ԱՄՆ վերադառնալու:

Հանդիպման ժամանակ Ալիեւ նշած է, որ բարձր կը գնահատէ Ատրպէյճանի մէջ Պրայգայի դիւա- նագիտական գործունէութիւնը, ինչ- պէս նաեւ շնորհակալութիւն յայտ- նած է Ատրպէյճանի եւ ԱՄՆ-ի յարաբերութիւններու զարգացման գործին ունեցած աւանդին համար, յաջողութիւններ մաղթելով անոր իր յետագայ գործունէութեան մէջ:

Յիշեցնենք, որ Մեթիւ Պրայ- գայի թեկնածութիւնը ամիսներ շարունակ էր հաստատուելու ԱՄՆ Ծերակոյտին կողմէ:

ԱՄՆ սահմանադրութեան հա- մաձայն՝ երկրի նախագահին կողմէ առաջադրուած թեկնածուները պէտք է հաստատուին ԱՄՆ Քոնկ- րէսի Ծերակոյտին կողմէ:

Սակայն այն պարագային, երբ Քոնկրէսը միջնատաշրջանային ար- ձակուրդի մէջ կը գտնուի՝ երկրի

### ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ԴԵՍ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ 3-ՐԴ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆ

Թրքական լրատուամիջոցնե- րու հաղորդումին համաձայն՝ 1915 թուականի իրադարձութիւններու քննարկման համար երրորդ եր- կիրներու միջամտութիւնը կը կա- սեցնէ Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւնները: Այս մասին յայտարարած է Թուրքիոյ Հայոց Պատրիարքարանի Հոգեւոր Խոր- հուրդի առաջնորդ՝ Գերշ. Արամ Արք. Աթեշեանը: Ան նշած է որ հայ-թրքական յարաբերութիւննե- րուն միջամտող երկիրները՝ սե- փական շահեր կը հետապնդեն, աւելցնելով նաեւ ըսած է որ ինք ցանկութիւն չունի այդ խնդիրնե- րը մեկնաբանելու:

Յիշեցնենք նաեւ որ Ֆրանսա- յի Ազգայի Ժողովը (Խորհրդարա- նի ստորին պալատը) Դեկտեմբեր 22ի նիստին ընդունեց Հայոց Ցե- դասպանութեան Ժխտումը քրէա- կանացնող օրինագիծը: Արդարեւ, սոյն օրինագիծը ներկայացուած է «Միութիւն յա- նուն ժողովրդական շարժման» (UMP) կուսակցութեան պատգամա- ւոր՝ Վալերի Պուալէի կողմէ: Իրեն աջակցած են կառավարող կուսակ- ցութեան, սոցիալիստական ընդ- դիմութեան եւ կեդրոնամէտներու մեծ մասը: Այժմ օրինագիծը պիտի ներկայացուի Սենատի քննարկու- մին:

### ՇԱՐԼ ԱԶՆԱԲՈՒՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԱԾ Է ՍԱՐՔՈՋԻՒՆ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱԳԻԾԻՆ ՀԱՄԱՐ

Աշխարհահռչակ շանտոնիէ, Ջուլիցերիոյ Հայաստանի դեսպան Շարլ Ազնաւուր իր երախտագիտու- թիւնը յայտնած է Ֆրանսայի նա- խագահ Նիքոլա Սարքոզիին, Հա- յոց Ցեղասպանութեան Ժխտումը քրէականացնող օրինագիծի խորհր- դարանի կողմէ ընդունման համար: Ֆրանսական Le Figaro թերթը, արտաստելով իր ելոյթը, կը գրէ. «Դուք բազմիցս հանդէս եկած էք ժխտումը օրէնքով դատապարտե- լու օգտին, արդարացիօրէն նշելով որ ազատ արտայայտուելու իրա- ւունքը պատմական փաստերը ժխտելու ազատութիւնն է: 9 տարի առաջ Ֆրանսան հպարտութեան զգացում յառաջացուց 500 հազար

Ֆրանսահայերու մօտ, դառնալով աշխարհի առաջին պետութիւնը, որ Հայոց Ցեղասպանութեան օրէն- քի ուժ տուաւ», գրած է Ազնաւուր եւ աւելցուցած. «Այսօր, մենք հպարտ ենք, որ մեր Ազգային Ժողովը քրէական պատասխանատ- ւութիւն սահմանած է ցեղասպա- նութիւնները ժխտելու համար»: Յիշեցնենք, որ Ֆրանսայի Ազգային Ժողովը Դեկտեմբերի 22ի իր նիստին ընդունեց Հայոց Ցե- դասպանութեան Ժխտումը քրէա- կանացնող օրինագիծը: Արդարեւ օրէնքը, ցեղասպանութեան փաստը ժխտելու պարագային, կը նախա- տեսէ մէկ տարուան ազատագրկում եւ 45 հազար եւրօ տուգանք:

### ՎԱԽՃԱՆՈՒԹԵԼ Է ՃԱՆԱԳՈՒԱԾ ԳԻՏՆԱԿԱՆ ԵՒ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԱՐԵՍ ԲԵԳԼԱՐԵԱՆԸ

Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան մամուլի ծա- ւալութիւնից յայտնուած են, որ կեանքի 73-րդ տարուամ Վախճա- նուել է ճանաչուած գիտնական, յայտնի մտաւորական, Երեւանի ճարտարապետութեան եւ շինա- րարութեան պետական համալսա- րանի (ԵՃՇՊՀ) հոգաբարձուների խորհրդի նախագահ Արեստ Գուր- գէնի Բեգլարեանը: Արեստ Բեգ- լարեանը ծնուել է 28.02.1938թ. Երեւանում: Աւարտել է Երեւանի Թելմանի անուան միջնակարգ դպրոցը՝ 1955թ.-ին, Երեւանի Պո- լիտեխնիկական ինստիտուտը՝ 1969թ.-ին, Մոսկուայի գեոդեզ- իայի եւ քարտէզագրութեան աս- պիրանտուրան՝ 1972թ.: 1964- 89թթ. աշխատել է Երեւանի Պո- լիտեխնիկական ինստիտուտի ին- ժեներական գեոդեզիայի ամպիո- նում, որպէս ուսումնական վար- պետ, ասիստնտ, աւագ դասախօս, դոցենտ: 1988-2011թթ. ղեկավա- րել է ինժեներական գեոդեզիայի ամպիոնը: 1989 թուականից 2005- ի Դեկտեմբերը եղել է Երեւանի ճարտարապետութեան եւ շինա- րարութեան պետական համալսա- րանի ղեկավարը: 2006-2010թթ.՝ ԵՃՇՊՀ խորհրդի նախագահ: 2010- 2011թթ. հոգաբարձուների խորհր- դի նախագահ: Նրան շնորհուել է. 1978թ.՝ տեխնիկական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան, 1991թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում, 1998թ.՝ տեխնիկական գի- տութիւնների դոկտորի գիտա- կան աստիճան: 1998թ. ընտրուել

է Հայաստանի ինժինեռական ակադեմիայի անդամ: 2008թ. ար- ժանացել է ՀՀ գիտութեան վաս- տակաւոր գործչի կոչման:

Պրոֆ. Ա. Բեգլարեանի կող- մից մշակուել են մի շարք մե- թոդներ գծային եւ բարձունքա- յին չափումներ իրականացնելու համար: 2000-2011թթ. 030 շինա- րարութեան մասնագիտական խորհրդի նախագահ, Եւրոպական շինարարական ինստիտուտների ասոցիացիայի անդամ, ԱՊՀ շի- նարարական բարձրագոյն ուսում- նական հաստատութիւնների մի- ջազգային ասոցիացիայի փոխ- նախագահ:

Ա. Բեգլարեանը 200-ից աւե- լի գիտական աշխատանքների, այդ թւում՝ 14 գիւտի հեղինակ է: Պարգեւատրուել է ԽՍՀՄ ոսկէ եւ արծաթէ մետալներով եւ դիպ- լոմներով, 1983թ.՝ ՀԽՍՀ Գերա- գոյն խորհրդի պատուգրով, 2002թ. «Անանիա Շիրակացի» մետալով:

ՀՀ կրթութեան եւ գիտու- թեան նախարարութիւնը եւ Երե- վանի ճարտարապետութեան եւ շինարարութեան պետական հա- մալսարանը խորապէս ցաւում են մեծ գիտնականի, հայրենասէր քա- դաքացու եւ լաւ ընկերջ կորստի համար:

Թաղման Տան Կարգը տեղի կ'ունենայ Դեկտեմբերի 28-ի, ժ. 1800-ին. Ս. Յովհաննէս եկեղե- ցում:

Յուղարկաւորութիւնը՝ Դեկ- տեմբերի 29-ին, ժ.14 00-ին Ս. Յովհաննէս եկեղեցուց:

### ԹՈՒՐՔԻՈՅ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲՆՆԱՐԿՈՒԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Վերջերս Պոլսոյ Հայոց պատրիարքարանին մէջ տեղի ու- նեցաւ Թուրքիոյ ազգային փոք- րամասնութիւններու կրօնական ղեկավարներու ժողով մը, քննար- կելու համար երկրի նոր սահմա- նադրութիւնը: Ժողովի մասնակիցները քննարկումի նիւթ դարձուցին Թուրքիոյ նոր սահմանադրու- թեան մէջ քաղաքացիներու խիղ- ճի եւ կրօնքի ազատութիւնը երաշ- խաւորող հարցերը:

քննարկման ենթարկել երկրի սահմանադրական յանձնաժողո- վին հետ:

Արդարեւ, թրքական կա- ռավարութիւնը նախապէս դի- մած էր երկրի ազգային գլխաւոր փոքրամասնութիւններուն, որպէս- գի իրենք եւս իրենց գործնական ներդրումն ունենային նոր սահ- մանադրութեան կազմութեան գործընթացին: Այս կապակցու- թեամբ պետական պատասխանա- տուներ, կրօնապետներուն տուած իրենց այցելութիւններու ընթաց- քին, խնդրած էին կացութիւնն ուսումնասիրել եւ իրենց տեսա- կէտներն ու առաջադրանքները փոխանցել առ որ անկ է:

Ներկաները որոշեցին յա- ջորդական չորս նիստերու ըն- թացքին պատրաստել գեկոյց մը, եւ զայն ներկայացնել Թուրքիոյ Խորհրդարանին եւ զայն

### ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ՉԱՅՑԵԼԵՑ

Շարունակուած էջ 1-էն  
Հայաստանի նախագահի նստավայրէն ներս տեղի ունեցած բանակացութիւններու արդիւնքով ստորագրուեցան վեց փաստա- թուղթեր՝ ներառելով «Հայաստա- նի Հանրապետութեան կառավա- րութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան կառավարու- թեան միջեւ Իրանի Իսլամական Հանրապետութեան կողմից Հա- յաստանի Հանրապետութեանը զար- գացման օժանդակութիւն տրա- մադրելու մասին» փոխըմբռնման յուշագիրը:  
Ինչպէս իր նախորդ այցելու- թեան առթիւ, այս անգամ եւս Մահմուտ Ահմատինէժաւ չայցե-

լեց Ծիծեռնակաբերդ՝ յարգելու Հայոց Ցեղասպանութեան զոհերը: 2007-ին Ահմատինէժաւ նա- խատեսուածէն առաջ ընդհատեց պաշտօնական իր այցը եւ վերա- դարձաւ Թեհրան: Այդ ժամանակ տարբեր բացատրութիւններ ու մեկնաբանութիւններ տրուեցան, թէ ան կրճատած էր իր այցելութիւնը, Յուշահամալիր եւ Ցեղասպանու- թեան Թանգարան այցելութեանէն խուսափելու համար, ինչը որ, նա- խատեսուած էր այցի ծրագրով:  
Այդ միակ դէպքն էր, երբ օտարերկրեաց ներկայացուցիչ մը, այն ալ երկրի նախագահ, հակա- ոակ նախօրք եղած համաձայնու- թեան, մերժած էր այցելել Ծիծեռ- նակաբերդ:

massispost.com  
daily news updates

# ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՀԱՐԱԲԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ, ՄԱՍՆԱԻՈՐԱԲԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԿՐԱՅ

## ՓԱՆՈՍ ԹԻԹԻՋԵԱՆ

Հայաստան բոլորեց իր անկախութեան քսաներորդ տարին: Ան, ժամանակահատված մը թողուց իր ետին, արտասովոր, գրկանքներով, թերիներով ու հակասութիւններով լեցուն, նաեւ, յաղթական նուաճումներով ու դանդաղ յառաջդիմութեամբ յատկանշուող:

Այս կարեւոր հանգրուանին, յարմար առիթն է կը խորհինք վերլուծական ակնարկ մը նետել այն տարածաշրջանին վրայ ուր կը գտնուի մեր հայրենիքը, նայելով, թէ զարգացող իրադարձութեան ընթացքը դէպի ուր կ'առաջնորդէ մեզ:

Հարաւային Կովկասը, որ Սովետ իշխանութեան օրով, Մոսկուայի կեդրոնէն ղեկավարուող շրջագիծ (periphery) մըն էր, յետսովետական շրջանին շարունակեց մնալ շրջագիծ մը բայց սակայն առանց կեդրոնի: Հոն ծնունդ առին երեք անկախ հանրապետութիւններ, որոնք սկսան կազմաւորուիլ ու զարգանալ համաձայն իրենց ազգային նկարագրին ու ձգտումներուն: Այդ երեք անկախ հանրապետութիւններն են Հայաստան, Վրաստան եւ Ատրպէյճան:

Հարաւային Կովկասը, ամբողջ այդ երկրամասին մէջ, ամենէն բարդ, անկայուն, անհասկնալի, վտանգաւոր, եւ մինչեւ իսկ պատերազմական վտանգի ենթակա գօտի մըն է:

Հարաւային Կովկասը, պարզ իր տեղուց (location) դիրքին պատճառաւ, այսօր կիզակէտը դարձած է շրջանային եւ միջազգային շահերու բախումին եւ մրցակցութեան: Այդ շահերը ունին տնտեսական, քաղաքական, աշխարհաքաղաքական (geopolitical) եւ սթրատեգիկ բնուիթ:

Աւելի մասնակի խօսելով, այսօր Հարաւային Կովկասը տազնապեցնող հարցերն են... Հարաբառի հիմնահարցը, փակ սահմանները, նաւթային գիծերը, (pipeline), ինչպէս նաեւ ծրագրերը նոր նաւթային շինուելիք գիծերուն:

Ներկայ մեր յօդուածով մենք պիտի անդրադառնանք վերոյիշեալ խնդիրներուն, դնելով զանոնք իրենց պարունակին (context) մէջ: Այսինքն, նկատի առնելով իւրաքանչիւրը, շրջանով մօտէն շահագրգռուած երկիրներու արտաքին քաղաքականութեան լրջին տակ:

Յաճախ ըսուած խօսք է, թէ պատմութիւնը ինքզինք կը կրկնէ:

Արդարեւ, 19րդ դարուն, Հարաւային Կովկասի եւ կեդրոնական Ասիոյ տարածաշրջանի վրայ, այսպէս կոչուած «Great game», մեծ խաղ մը կը խաղցուէր: Անգլիական եւ ռուսական կայսրութիւնները դիւանագիտական սուր մրցակցութեան մէջ էին հասնելու համար Հնդկաստանին, տիրապետութիւն հաստատելու համար այդ երկրին վրայ: Ներկայիս ուրիշ «մեծ խաղ» մը կը խաղցուի միեւնոյն աշխարհամասին վրայ: Այս անգամ, հասնելու համար Կասպից Ծոցին եզերող երկիրներու բնական կազի եւ նաւթի աղբիւրներուն: Այս պարագային խնդրոյ առարկայ դերակատարները Ռուսիան, մէկ կողմէ, իսկ արեւմուտքը միւս կողմէ: Բայց այս անգամ հարցերը աւելի բարդ են: Որովհետեւ, մէկ բան է նաւթի եւ բնական կազի աղբիւրներուն հասնելը, իսկ ուրիշ բան է այդ ուժանիւթը միջազգային շուկաները հասցնելը: Հարկ է նաւթատար խողովակները (pipeline) Կասպից Ծոցի նաւթահորերէն, Հարաւային Կովկասի վրայով Եւրոպա հասցնել:

Ռուսաստանը իր տնտեսութիւնը առաւելաբար հիմնած է, առհասարակ հում նիւթ, մասնաւորաբար բնական կազ եւ քարիւղ արտադրելու իր քաղաքականութեան վրայ: Այդ առնչութեամբ ան ունի «իր յատուկ ու սեփական սիստեմը»: Եւ այն բոլոր ծրագրերները որոնք կը ձգտին շրջանցելու Ռուսական հողը, անոնք վնասած կ'ըլլան Ռուսիոյ կենսական շահերուն:

1990-ական թուականներէն սկսեալ, Թուրքիան, հետզհետէ սկսաւ դառնալ կարեւոր դերակատար մը Կասպից Ծովէն դէպի Եւրոպա կազ ու քարիւղ փոխանցող: Այս նպատակին իրագործման համար նախ յղացաւ, այսպէս կոչուած BTC (Baku, Tbilisi, Ceyhan) ծրագիրը: Ներկայիս այդ ծրագիրը իրականացած է արդէն: Պաբու, Թիֆլիս, Էրզրումի վրայ կազ ու քարիւղ կը փոխադրէ, նաւթային գիծերով (pipeline) Միջերկրական եւ անկէ անդին, դէպի Եւրոպական շուկաները: Յատկանշականը այն է, թէ BTC-ի նաւթային գիծերը կը շրջանցեն ռուսական հողամասը: Երկրորդ ծրագիրը՝ Nabuco-ն է: Այն որ, նոյնպէս, Կասպից Ծովու երկիրներէն, Թուրքիոյ վրայով, մինչեւ Իտալիա եւ Վիեննա կազանիւթ պիտի փոխադրէ: Ծրագիր մը՝ որ մեծապէս կը

վնասէ Ռուսաստանի, այդ մարզին մէջ, մենատիրական դիրքին: Քանզի ռուսական ամբողջ տնտեսութիւնը մեծաւ մասամբ հիմնուած է հում նիւթ, առաւելաբար, կազ ու նաւթ արտադրելու վրայ:

Հարկ չկայ մանրամասնութեան մէջ մտնելու այն մասին թէ որքան բուռն կերպով Մոսկուա կը ջանայ վիժեցնել Nabuco-ի ծրագիրը, իր ուրոյն նաւթային գիծերով, որոնք ուղղակի Եւրոպային կազ պիտի հասցնեն սեւ եւ Պալթիկ ծովերու վրայով:

Nabuco-ի ծրագիրը վիժեցնելու համար Մոսկուա անցեալ տարի համաձայնութիւն կնքեց Ատրպէյճանի հետ: Ըստ այդ համաձայնութեան, Ատրպէյճանական Շահ Ծէնիկ նաւթահորերէն Ռուսաստան բնական կազ պիտի գնէ որոնք պիտի սպառին Հիւսիսային Կովկասի շրջանին մէջ: Այդ նոյն նաւթահորերէն է որ Nabuco-ն ծրագրած է կազ գնել:

Ատրպէյճանի եւ Ռուսիոյ միջեւ սերտացող առեւտրական կապերը կը մտահոգեն Հայաստանը: Ատրպէյճան ունի նաեւ այլ պատճառներ իր ունեցած, արեւմտուքի հետ աւելի սերտ կապերը հարցականի տակ դնելու:

Արդարեւ, ռուս եւ վրացական կոնկրետ ընթացքին եւ անոր աւարտին ետք, արեւմուտքը ձեռնածալ մնաց: Ազդու կերպով դիրք չբռնեց Մոսկուայի դէմ: Ձեւական կարգ մը սպառնալիքներէ ետք «business as usual» բնականոն դարձաւ: Եթէ Վրաստանի նման սերտ դաշնակիցի նկատմամբ Եւրոպան ու Ամերիկան այդպէս կը վարուին եւ միեւնոյնը տեղի պիտի չունենայ Ատրպէյճանի պարագային, եթէ ճգնաժամը հնչէ: Արդեօք Հայաստան ճիշդ չէր շարժած, հաւատարիմ դաշնակիցը մնալով Մոսկուային:

Պաքուն եւ այլ կարգ մը մայրաքաղաքներ, ինքզինզնուն նման հարցումներ ըրին:

Նախագահ Օպամայի վարչկարգին օրով ռուս եւ ամերիկեան փոխ-յարաբերութիւնները հիմնական փոփոխութիւններու ենթարկուեցան: Այն ինչ կը վերաբերէր ամերիկեան, արեւելեան Եւրոպայի եւ Հարաւային Կովկասի նկատմամբ որդեգրուած նոր քաղաքականութեան, հետեւեալ սկզբունքը պիտի որդեգրուէր՝ «First Russia», այսինքն՝ այնտեղ ուր Սովետ Միութեան նախկին արբանեակներէն մէկուն կամ միւսին շահերը բախէին նախընտրութիւնը կը տրուէր Ռուսիոյ: Տակաւին աւելին կար:

Երբ Ամերիկան տնտեսական սուր տագնապի ենթարկուեցաւ, ան

իր կովկասեան շահագրգռուածութեան շատ բան նուազեցուց: Նոյն համեմատութեամբ Մոսկուայի ազդեցութեան տեսակարար կշիռը բարձրացաւ: Թոյլ օղակ մնալով Վրաստանը: Վրաստանի թղթածրարը, Ռուսիոյ համար, տակաւին չէ փակուած: Եւ պատմութիւնը ցոյց կու տայ թէ այն տագնապները որոնք իրենց լուծումը չեն գտած, անոնք հակամէտ են կրկնուելու:

Մոսկուայի համար, մասնաւորաբար ապահովական տեսակետով, կենսական նշանակութիւն ունի Հարաւային Կովկասի իսլամ հանրապետութիւններու մէջ մեծ բոյն դրած են իսլամ արմատական ծայրայեղ շարժումները, որոնք դուրսէն կը ֆինանսաւորուին: Ռուսիայէն անջատուելու եւ իսլամական կարգեր հաստատելու ձգտող Հիւսիսային Կովկասի հանրապետութիւններու աճող իլլտումները նախագահ Մէտվէտեի խօսքերով, Ռուսիոյ ներքին թիւ մէկ խնդիրն են: Եւ որպէսզի Մոսկուայ կարենայ պահել ու հակահռի տակ պահել Հիւսիսային Կովկասը, ան, իբրեւ «buffer zone», ապահովութեան գօտի, անհրաժեշտ կարիքն ունի Հարաւային Կովկասի թիկունքին: Եւ ո՛վ որ, այդ տարածաշրջանին մէջ, ռուսական շահերը կը վտանգէ, այդ մէկը կ'ըլլայ աղէտի գնով: Ռուսիոյ, Վրաստանի դէմ մղած պատերազմը, խորքին մէջ, ինքնապաշտպանութեան եւ ոչ թէ յարձակողական բնուիթ ունէր:

Անդրկովկասի մէջ ամերիկեան շահագրգռութեան թափանցումը մեծ մտահոգութիւն պատճառեց Թուրքիոյ: Վաղուց, Սովետ Միութեան կազմալուծուելէն ասդին, Թուրքիոյ նախագահ Թուրքուլ Օզալի օրերէն ասդին Թուրքիան մեծ աշխատանք թափեց կեդրոնական Ասիա եւ Հարաւային Կովկաս իր ազդեցութիւնը տարածելու համար նորանկախ իսլամ հանրապետութիւններու մօտ:

անուններով կոչել դպրոցներ: Եւ  
ամենաուշագրաւ,- ի թիւս այլ  
առաջարկութիւնների,- ի յաւեր-  
ժացում Մեծ Եղեռնի անմեղ զոհերի՝  
կանգնեցնել յուշարձան:

Վարդգէս Համազասպեանի  
նպատակաւորութեամբ գործունէու-  
թիւնը ոչ միայն հայութեան երկու  
հատուածների (արեւմտահայ, արեւե-

լահայ) իրարանաչորութեան հոր-  
վոյթում էր, այլև Սփիւռքահայու-  
թեան հետ կապի կոմիտէի միջոցով  
Սփիւռքում հայապահպանութեանն էր  
միտուած: ՀԽՍՀ Նախարարների  
խորհրդի նախագահ Անտոն Քոչին-  
եանին յղուած, 13 Յունուար, 1965  
թուակիր դիմումով Վ. Համազասպ-  
եանը Հայրենիք-Սփիւռք յարաբերու-  
թիւնների կապերի ընդլայնումը խիստ  
հեռանկարային համարելով, հարկ է  
համարում նշել. «Այժմ գանազան  
պահանջներով մեզ են դիմում շատ  
կազմակերպութիւններ, ինչորոշով  
առաքել բազմաքանակ պարբերական-  
ներ, գրականութիւն եւ այլ նիւթեր՝  
տեղի հայութեան համար:

Միայն վերջերս այդպիսի  
ինչորոշ եւ առաջին անգամ ներ-  
կայացրել իրանի եւ Յորդանանի  
սովետական դեսպանութիւնները:  
Կապեր են ստեղծվում Հոլանդիայի  
եւ Քուէյթի հայ գաղութների հետ:  
Բաւական է ասել, որ փոքրիկ Քուէյթ-  
թում վերջին մի քանի տարուայ  
ընթացքում գոյացել է վեց հազարից  
աւելի հայութիւն, եւ այդ թիւը  
օրէցօր աճում է: Մեր առջեւ ծառա-  
ցող ինչորոշները ինքնըստինքյան  
շատանում են: Ներկայումս կոմիտէի  
տարած աշխատանքների շնորհիւ  
Սփիւռքում լայն ծաւալ է ստացել  
հայ մշակութային արժէքների՝ ար-  
խիւնների, գրականութեան, գեղան-  
կարչական գործերի, ազգային գար-  
դարուեստի առարկաների, թանգա-  
րանային իրերի եւ այլնի փոխադ-  
րութիւնը Հայաստան»:

Հիմնականում այդ տարիներ-  
ից սկսեալ համալրուեցին Մատե-  
նադարանի, Հայաստանի հանրային  
գրադարանի, Եղիշէ Չարենցի ան-  
ուան գրականութեան եւ արուեստի  
թանգարանի, Հայաստանի ազգային  
պատկերասրահի, ինչպէս նաեւ մի  
շարք այլ թանգարանների ֆոնդե-  
րը, ինչպէս անձնական արխիւնե-  
րով, այնպէս էլ եւրոպական եւ  
մերձաւորարեւելեան աճուրդներում  
գնուած ազգային-մշակութային ար-  
ժէքներով:

Միայն երեւակայել կարելի է,  
թէ ինչպէս Վ. Համազասպեանը կա-  
րողանում էր գործունէութեան այն-

պիսի լայնածաւալ ծրագիր մշակել  
եւ իրականացնել, յատկապէս ազգա-  
յին մասունքների համահաւաքման  
առումով: Իր հեռատեսութեան շնոր-  
հիւ էր, որ հայ գիտնականները  
յաճախադէպ էին գործուղուած աշ-  
խարհի տարբեր երկրներ՝ ձեռագ-  
րերի ուսումնասիրման եւ հաշուառ-  
ման նպատակով. ՀԽՍՀ Նախարար-  
ների խորհրդի նախագահ Ա. Քո-  
չինեանին, 24 Փետրուար, 1965 թուա-  
կիր նամակով ինչորոշ է Լ. Խաչիկ-  
եանին գործուղել Երուսաղէմ. «Դա-  
րերից մեզ ժառանգութիւն հասած  
հայերէն ձեռագրերի ընդհանուր քա-  
նակի կէսից աւելին պահուած է  
արտասահմանեան տարբեր երկրնե-  
րում: Մաշտոցի անուան մատենա-  
դարանից յետոյ ամենամեծ ձեռագ-  
րական հաւաքածուն գտնուած է  
Երուսաղէմի հայկական պատրիար-  
քութեան մատենադարանում, ուր  
պահուած է շուրջ 4000 հին հայերէն  
ձեռագիր: Ե՛ւ քանակի, ե՛ւ բովան-  
դակութեան տեսակէտից արժէքաւոր  
են նաեւ Վենետիկում, Վիեննայում,  
Չմառում (Պէլլուրթի մօտ) եւ Սպա-  
հանում պահուող հայերէն ձեռագրե-  
րը, սակայն նրանք համեմատաբար  
ուսումնասիրուած են եւ չայտնի՝  
իրենց բովանդակութեամբ, քան Երու-  
սաղէմի ձեռագրերը, որոնց շարքում  
կան հայ հին մատենագրութեան չու-  
սումնասիրուած բազմաթիւ յուշար-  
ձաններ: Բացի ձեռագրերից, Երու-  
սաղէմի վանքում պահուած են հայոց  
պատմութեան նոր եւ նորագոյն շրջա-  
նին վերաբերող խիստ արժէքաւոր  
արխիւային ֆոնդեր, թանգարանա-  
յին հազուագիւտ իրեր եւ այլ պատ-  
մա-ազգագրական նիւթեր»:

Սփիւռքահայ բարերարների  
նուիրատուութիւնների նպատակա-  
յին տնօրինման, տարբեր գաղթա-  
վայրերում գործող հայրենակցական  
միութիւնների գործունէութեան՝  
նրանց Հայրենիքում կատարուող  
բարեփոխումներում ներգրաւման,  
Հայաստանից արուեստագէտների  
հիւրախաղեր մեկնելու, «Կիւլպենկ-  
եան» հիմնադրամի նուիրատու-  
թիւնների կազմակերպման-ընդուն-

Շարք էջ 19

**A.G.B.U. -A.Y.A.**  
Glendale—Pasadena  
Chapter  
**THE MARCHING BAND**

Have Fun Join Now Learn to Play

Classes are Every Saturday @ 11:am  
for an application or to reserve your spot  
call 626-794-7942 or send an email to  
agbupasadena@gmail.com

Professional Instructors  
Beginners are welcome



### ԻՐԱՆԱՐԱՅ ԱՌԱՋԻՆ ԺԱՊԱԻԵՆԸ



Մամուկ (Արշաւիր Ղարիբեան) եւ Լուսիկ (Էլենա ԱԼԲեսանդրեան)

Կիրակի, Նոյեմբեր 20ին Կլենտելլի Հանրային Գրադարանի սրահին մէջ ցուցադրուեցաւ առաջին հայերէն ժապաւէնը՝ «Մենք ու մեր տունը» անուամբ, որու բեմադրիչն էր վաստակաւոր դերասան եւ ռեժիսոր Արշաւիր Ղարիբեանը:

Ժապաւէնի նիւթը առնչուած էր իրանահայ ընտանիքի մը որ շատ շատերու նման արտագաղթած են իրենց ծննդավայրէն եւ Աւստրալիան կը հասնին Միացեալ Նահանգներ: Ժապաւէնին միջ արտացոլուած են այն բոլոր դժուարութիւնները, որոնց կը հանդիպին նորեկները: Բոլոր դերակատարները (դերասաններ եւ սիրողներ) յաջողութեամբ կատարեցին իրենց դերերը:

Յաջողութեամբ հանդէս եկան իրանահայ թատրոնի վաստակաւոր դերասաններ Նազար Ղազարեանը եւ Խաչիկ Իսազուլին: Ստանձնած դերերուն յաջող եւ տիպիկ խաղարկութիւն ունեցան Վալոդ Գրիգորեանը, Ժանէթ Ոսկանեանը, Արբի Իսախանյանը, Սղեւա Յովակիմեանը, Նինէթ Թովմասեանը, Յասմիկ Մատթէոսեանը, Մասիս Ղարիբեանը եւ մի քանի ուրիշ դերակատարներ:

Ժապաւէնը մի քանի թերութիւններով հանդերձ, յաջող էր, հետաքրքիր եւ արժանի գնահատանքի: Ակներեւ էր դերուստացրերասան Արշաւիր Ղարիբեանի երկարատեւ ճիգն ու ջանքը ֆիլմի պատրաստութեան համար:

Նշելի է որ իրանի ֆիլմարուեստի ասպարէզին մէջ աշխատած են տասն աւելի հայ բեմադրիչներ: Սակայն «Մենք ու մեր տունը» իրահանայ առաջին ֆիլմը կարելի է համարել: Գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքերով հանդէս եկան ժապաւէնի հովանաւորներէն Սերոօ Մեսրոպեանը եւ բեմադրիչ

Արշաւիր Ղարիբեանը: Տեղին է յիշել որ պատանի տարիքէն Արշաւիր Ղարիբեանը նուիրուած է բեմին եւ եւ հայ բեմի վրայ դաստիարակուած է քանի մը իրանահայ դերասաններու մօտ: Նոր Զուղայի մէջ բեմադրած է մի քանի հայ դասական թատերախաղեր եւ կատակերգական խաղեր: Մեկնելով Հայաստան մասնակցած է մի քանի բեմադրութիւններու եւ լայն փորձառութիւն ձեռք բերած է: Ահա թէ ինչ է գրած «Մ. Հայաստան» գեղարուեստական ամսագիրը իր 1982 թուի 8-րդ համարին մէջ:

#### ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ

#### «ԱՐՄԵՆ» ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ

Իրանի Նոր Զուղա քաղաքում մէկ տասնամեակ է, ինչ գործում է «Արմեն» թատերախումբը, որի անդամները հիմնականում արուեստասէր երիտասարդ աղջիկներ եւ տղաներ են:

«Արմեն» թատերախմբի ղեկավարն է շնորհաշատ դերասան եւ բեմադրիչ Արշաւիր Ղարիբեանը:

Ղարիբեանը բարձրագոյն մասնագիտական կրթութիւն չի ստացել, սակայն նրա բնածին տաղանդը կարողանում է յաղթահարել բեմական արուեստի դժուարութիւնները:

Թատերախումբն իր հարուստ խաղացանկով հանդէս է գալիս Նոր Զուղայում, Թեհրանում, Շահինշահրում եւ իրանի հայաշատ այլ քաղաքներում, ներկայացնելով հայ եւ համաշխարհային գրականութեան գործեր:

Արշաւիր Ղարիբեանի բեմադրած Իբսենի «Նորան» եւ Բրեխտի մի շարք գործերը միշտ եւ ամենուրեք բարձր են գնահատուել հանդիսատեսի կողմից:

Ժապաւէնը կը ցուցադրուի նորէն Յունուարի 22ին:

### ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ «ՌԵՔՎԻԷՄ»-Ը՝ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԵՐՈՎ

Նոյեմբերի 19-ին Բեռլինի ֆիլհարմոնիայի կամերային դահլիճում կայացել է Տիգրան Մանսուրեանի՝ Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած «Ռեքվիէմի» համաշխարհային պրեմիերան՝ գերմանական «Ռէնաս» կամերային երգչախմբի եւ Միլենիէնի կամերային նուագախմբի կողմից: «Փորձել եմ այս ստեղծագործութեան պատուիրատուին գտնել Հայաստանում, բայց չի ստացուել, աւելի ճիշդ չենք կարողացել համաձայնութեան գալ ինչ որ հարցերում», -ասում է Տիգրան Մանսուրեանը: Ստեղծագործութիւնը հեղինակը նուիրել է հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին: «Ռեքվիէմ գրելու աւելի հիմնաւոր պատճառ ես չունէի», -ասում է:

Համատեղուել են երեւոյթներ, որոնք երբեք չեն հանդիպել՝ հայ հոգեւոր երաժշտութիւնն ու լատինական կանտոնիկ տեքստը:

Ռեքվիէմի պատուէրը մատուցուած ստացել է գերմանական «Ռէնաս» երգչախմբի ու Միլենիէնի կամերային նուագախմբի կողմից: «Փորձել եմ այս ստեղծագործութեան պատուիրատուին գտնել Հայաստանում, բայց չի ստացուել, աւելի ճիշդ չենք կարողացել համաձայնութեան գալ ինչ որ հարցերում», -ասում է Տիգրան Մանսուրեանը: Ստեղծագործութիւնը հեղինակը նուիրել է հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին: «Ռեքվիէմ գրելու աւելի հիմնաւոր պատճառ ես չունէի», -ասում է:

Նոյեմբերի 19-25-ը Գերմանիայի չորս տարբեր քաղաքներում լեւի-լեցուն դահլիճներում հնչեց Տիգրան Մանսուրեանի Ռեքվիէմը՝ արժանանալով եւրոպացի ունկնդրի փայլուն ընդունելութեանը: Ինչն իր արձագանքը գտաւ նաեւ տեղական լրատուամիջոցներում: Ե՞րբ կը կայանայ մանսուրեանական Ռեքվիէմի հայաստանեան պրեմիերան՝ առ այժմ խիստ անորոշ է, նուագագոյնը 1.5 տարի յետոյ միայն: Դա գերմանական կողմի հետ կնքուած պայմանագրի պահանջն է:

«Շուրջ 10 տարի աշխատել եմ այս ստեղծագործութեան վրայ, փորձել եմ համատեղել երեւոյթներ, որոնք երբեք չեն միահիւսուել՝ մեր հոգեւոր երաժշտութիւնն ու լատինական կանտոնիկ տեքստը, որը մշակութային համընդհանուր արժէք է», - արդէն Երեւանում լրագրողների հետ հանդիպմանն ասել է մասնորո Կարմիր Մանսուրեանը:

«Աւելի քան տասը տարի Ռեքվիէմի նիւթն ինձ հետապնդել է, ստեղծել եմ մի քանի տարբերակներ ու կիսատ թողել: Ռեքվիէմը ծէս է, իմաստ չունէր կապել ուրիշ թատրոնը, ու գտայ բանալին՝ հայկական մանրանկարչութեան մէջ, առաջին անգամ կենդանացրի այն դէմքերը, որոնց այսօր էլ կը հանդիպէք Երեւանի փողոցներում՝ մեծ ու սեւ աչքերով, նրանք երգում են»: Մանսուրեանի Ռեքվիէմում

### ՄԱՍԻՍ ԱՐԱՐԱՏ ԱՆԱՅԻՏ ԻՆՃԵԱՆ

Ասաց մի օր իմ սիրելի բարեկամ որ Հայրենիք էր իջել, «Ա՛խ, սիրելի իմ ընկեր, ամէն ինչ սիրուն, շքեղ եւ գեղեցիկ է մեր երկրում, Սակայն մի բան գոր չեմ կարող սոռանալ էն էլ տեսքն է մեր վեհափառ Մասիսին:

Երբ նա տեսայ, յանկարծ գիտցայ որ ես Նոյի, Հայկի, Արամի իմ երագած Հայաստանի գաւազն եմ: Բայց ո՛հ, ինչ խորթ, մի պահ վերջ Հոգիս խռով կ'անդրադառնամ Որ հայուն փառքը, եւ տէրը, իր շքեղ Ալեհերը, իր Մասիսը, աւաղ չկայ: Նա հեռուէն տխուր ու վեհ հրաւեր է կարդում Որ իր տէրը չմոռանայ զայն երբէք Կրկին իր տեղն անցնի, որ Հայաստան ըլլայ կերտ:

Երբ հիմի էլ Հայաստանից եմ խօսում, Ինձ թոււմ է որ իմ վեհ Արարատը ասում է. «Ով քաջ հայ, իմ սիրելի նախնիս տէր չկարծես որ ես պիտի սպասեմ հրեային նման ծեր Չորս հազար տարիներ որ ունենամ քեզ պէս տէր ես արդէն ալեհեր եմ, ինձ համար Յիսուս տարին ինձ թոււմ է շատ երկար, Ե՛լ, կը բաւէ, ուժեւորուէ, հաւաքուէ եւ գիս պոկէ թշնամիի ձեռքից սեւ Որ սօսն սօսենք, լինենք մեր հիմ օրերի երկիրը ես Ուր երգն ու պարը չպակսին հայ տներուն շէնքերէն եւ ես կրկին զարդարուեմ, իմ գեղեցիկ կարմիր, կապոյտ նարնջագոյն գոյներով Ու հաւաքենք աշխարհի ամէն հայու մի բեկոր Ոհ, այն ատեն, այն ատեն ով սիրելի իմ ընկեր ես այն ատեն քեզ կ'ասեմ Որ կ'ապրիմ հոն իմ ազատ անկախ Իմ Մասիսի կողքին դէմ եւ երբ մեռնեմ, Հայ Մասիսին քով թաղուեմ:

**ԿՏԱԿ ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ**

Թողէք ինձ որ ես անշիրիմ մնամ, Անանուն մեռնեմ, ընդմիշտ հեռանամ, Իրենց յուշերում արդեօք կը յիշե՞մ, Ծանօթ, անծանօթ, չարն ու բարեկամ:

Թողէք որ լքեմ իմ ապաստանը, Հանեմ այնտեղ ուր չկան վատ մարդիկ, Մոռացուեմ, ձուլուեմ ունայնութեան մէջ, Գէթ կոխած հողը, դառնայ երջանիկ:

Թողէք հասնեմ ես անժիր ծովերին, Խառնուեմ ահարկու գոռ ալիքներին, Գուցէ եւ մի օր անշունչ ձկան պէս, Իրենց խորքերից շարտեմ ինձ դուրս:

Գուցէ եւ գտնեմ դամբան իմ հոգու, Յաւիտենական չկայ ոչ մի բան, Այս է բանիմաց կամ անմիտ մարդու, Վերջին ապաստանն, խաղաղ հանգրուան:

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
 SERVING BATON ROUGE SINCE 1979



ՆԱՆՍԵՆ 150

ԹԵ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՆ ՈՒՆԵՆԱՅԻՆՔ ՆԱՆՍԵՆ, ԱՇԽԱՐՀԸ ՇԱՏ ԲԱՆ ԿԸ ԳՏՆԵՐ

Դոկտ. Արամայիս Միրզախանեանի (Ստոքհոլմ)

Նանսէնի ծննդեան 150 ամեակն է: Ան իր կեանքով ու գործով աշխարհի մարդկութեան ցաւերն ու հոգերը շալկած? Կը շարունակէ պատիլ արեգակի շուրջ: Աշխարհը պէտք ունէր Նանսէնին, եւ բնութիւնը զինք պարգեւեց մարդկութեան: Նանսէն գիտնականը, բեւեռախոյզը, մեծ մարդասէրն ու հայ ժողովուրդի անկեղծ բարեկամը, պարտք չմնաց բնութեան, եւ իր անսպառ տաղանդն ու կարողութիւնը շուրջօրէն նուիրաբերեց մարդկութեան հոգերու թեթեւացման գործին, որմէ նաեւ բաժին հասաւ եւրոպական մեծ պետութիւններուն կողմէ խաբուած հայ ժողովուրդին:



Nansen)-ը, ծոռը եւ տուն թանգարանի տեսուչը: Անոնք մեզ ընդունեցին հարազատի ջերմութեամբ: Դժուար է նկարագրել այն ապրումները, որ ունեցանք Նանսէնի տան շէմին ոտք դնելու ժամանակ: Ան տասնամեակներ այս տանն մէջ ապրած էր, ստեղծագործած, ծրագրած իր անգուգական կեանքի գործունէութիւնը: Անոր գրադարանի հայկական բաժնի մէջ ինամբով կը պահուէին գիրքեր, լուսանկարներ, փաստաթուղթեր ու այն ամէնը, ինչ կը վերաբերի հայերուն ու Հայաստանին:

Մեծ գոհունակութեամբ լսեցինք տուն թանգարանի տեսուչի բացատրութիւնները Նանսէնի տուն



«Կը կարեկցիմ հայ ժողովուրդին, որ խճճուեցաւ եւրոպական քաղաքականութեան մէջ: Անոր համար աւելի լաւ կ'ըլլար, եթէ իր անունը երբեք չհնչած չ'ըլլար եւրոպացի որեւէ քաղաքագետի բերնէն: Սակայն հայ ժողովուրդը բնաւ չի կորսնցնել իր յոյսը: Ան յամառ, անխոնջ կ'աշխատի եւ կը սպասէ, շարունակ կը սպասէ:

Ան կը սպասէ մինչեւ օրս»: 25 տարի առաջ էր: Նանսէնի 125 ամեակի օրերուն, Ստոքհոլմի Հայ-Շուեդական մշակութային կեդրոնի եւ Ուփսալայի հայ մշակութային միութեան խումբ մը անդամներ, որոշեցինք երթալ Նորվեգիա եւ ծաղիկներ դնել մեր ժողովուրդին անմնացորդ նուիրուած ու մեծ ծառայութիւններ կատարած Նանսէնի գերեզմանին: Մեկնեցանք Օսլո: Ճշդուած ժամուն Նանսէնի տուն թանգարանի առջեւ մեզի դիմաւորեցին Նանսէնի թոռնիկը՝ Ալգիլ Նանսէնը (Eigil

թանգարանի մէջ գտնուող իւրաքանչիւր առարկայի մասին: Այնտեղ աւելի խոր գզացինք, թէ ինչպիսի տիտանական կամքի ոյժ ու խոր գիտելիքներու տէր եղած է աշխարհի հոգերով ապրած Նանսէն մարդը: Մեզի հետ բերած ծաղիկները, հայերէն - նորվեգերէն լեզուներով՝ «Հայ ժողովուրդի անկեղծ բարեկամ Ֆրիտոնոֆ Նանսէնին» գրութեամբ, մեծ յուզումով գետեղեցինք անոր գերեզմանին, որ կը գտնուէր տուն թանգարանի բակին մէջ: Ծունկի եկայ մեր մեծ բարեկամի շիրիմին առջեւ ու համբուրեցի շիրմաքարն ու նկատեցի, որ Նանսէնի տապանաքարի վրայ ծննդեան եւ մահուան թուականներ չկան: Պարզ է: Նանսէնի մեծութիւնը ժամանակի մէջ չի տեղաւորուիր, ինք եւ իր գործը անմահ են: Չլինէր Ֆ. Նանսէնը, աշխարհը շատ բան կը կորսնցնէր, մեր օրերուն ունենայինք Նանսէն, աշխարհը շատ բան կը գտնէր...:

ՃԱԿԱՏԱԳՐԵՐ

ՔՈՐԷԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆՈՎ

ՆԱՅԻՐԱ ՎԵՐԻՆԵԱՆ

Անահիտ Լուսեան: Այսպէս է այն քորէացի որբի անունը, ում պատերազմը բերեց Խորհրդային Հայաստան, ապա նրան որդեգրեց հայկական ընտանիք, ու նրա ճակատագիրը յաւերժական թելերով կապուեց հայ անուան հետ: «Ես 42 տարեկան էի, երբ իմացայ, որ իմ ծնողները ինձ որդեգրել են: Նրանք երդուել էին իմ կեանքի գաղտնիքը իրենց հետ գերեզման տանել, իսկ ես երբեք չեմ էլ զգացել», պատմում է տիկին Անահիտը:



Երբ սկսուեց քորէական պատերազմը, հազարաւոր որբուկների դուրս բերեցին այդ երկրից, եւ նրանք սիրուեցին աշխարհով մէկ: Տիկին Անահիտին ճանապարհը բերեց Հայաստան: «Այստեղ բերել են 400 երեխայ: Չգիտեմ՝ մեզ փողոցից են գտել, թէ ինչ... Երբ ես իմացայ իմ կեանքի ողջ եղելութիւնը, գնացի այն մանկատուն, ուր տեղափոխել էին մեզ: Այնտեղ գտայ մի կնոջ, ով այդ տարիներին դաշնակ է աշխատել: Նա պատմեց, որ հենց մեզ մտցրեցին մանկատուն, վերելից անմիջապէս հրաման եկաւ՝ մեր քորէական անունները փոխելու եւ դրանք հայկական դարձնելու: Ես դարձայ Ղամբարեան Սիրանոյշ»:

Փոքրիկին ճակատագիրը արդէն հասցրել էր ծանրագոյն հարուած՝ կտրելով իր արմատներից եւ ծննդավայրից, եւ աւելի չխոցելու համար, թոյլ տուեց ընտանիք ունենալ: «Իմ փաստաթղթերից ոչինչ չի պահպանուել: Նոյնիսկ չգիտեմ նախկին՝ քորէական անունս: Երբ գնացի պետական արխիւ, այնտեղ գտայ հօրս՝ իմ որդեգրման համար ներկայացրած դիմումը: Դա 1950 թուականն էր: Իսկ Նորքի մանկատանը, ուր պահուում էին մեզանից մնացած փաստաթղթերի ինչ-որ կտորներ, իմ ծննդեան թիւը գրուած էր այսպէս՝ 1948 թ., Հոկտեմբերի 1) 15)»:

Որդեգրումից յետոյ քորէացի աղջնակին հայ ընտանիքը տալիս է Անահիտ անունը: Երկրաբանի ընտանիքը հիւրընկալ եւ ջերմ օժախ է դառնում նրա համար: Երջապատում բոլորը գիտէին, որ հասարակ հայկական ընտանիքում մեծանում է կորեացից Հայաստան բերուած որբուկ, սակայն ոչ ոք արտառոց վերաբերմունքով աչքի չի ընկնում: «Յետագայում ընկերներս ինձ պատմեցին, որ երբ բակում խաղում էի, ես երբեմն անհասկանալի բառերով նրանց էի դիմում, հաւանաբար իմ բառապաշարում դեռեւս պահպանուել էր կորեական լեզուն», պատմում է տիկին Անահիտը:

Այսպէս, մշտապէս կապուելով հայկականի հետ, Անահիտ Լուսեանը աւարտում է դպրոցը, այնուհետեւ Վ. Բրիւսովի անուան լեզուաբանական համալսարանը: Ապագայ ամուսինը նոյնպէս տեղեակ է լինում, որ իր կինը հայուհի չէ: Տիկին Անահիտը, ծնողների մահից յետոյ իմանալով իր կեանքի պատմութիւնը, սկսում է հետաքրքրուել իր արմատներով: Նա դիմել է ռուսական «Սպասիր ինձ» հաղորդմանը իրեն օգնելու համար: «Նրանք ինձ պատասխանեցին, որ ես անձամբ պէտք է

Մոսկուայ գնամ, իսկ դա այսօր ինձ համար այնքան էլ հասանելի չէ... Ինձ համար Հայաստանը իմ հայրենիքն է, բայց շատ կ'ուզէի ծննդավայրս էլ տեսնել, ծնողներիս գերեզման այցելել, գուցէ հարազատներ գտնէի...»:

Իսկ այն հարցին, թէ ինչպէս է այսօր ապրում Հայաստանի որդեգրեալը, Անահիտ Լուսեանը պատասխանեց. «Վատ: Ստանում եմ 21 հազար դրամ կենսաթոշակ: Դրանով դէ արի ու ապրի: Ես երկու երեխայ ունեմ, ովքեր ինձ օգնում են: Եթէ նրանք չլինէին, իմ վիճակը շատ բարդ կը լինէր: Ինձ



խորհուրդ են տալիս դիմել պետութեանը՝ օժանդակութեան խնդրանքով, սակայն քանի որ իմ իսկական փաստաթղթերը չկան, ես ոչինչ չեմ կարողանում ձեռնարկել»:

Սակայն տիկին Անահիտը սիրում է իր երկիրը, իրեն արդէն նրա մի մասնիկն է համարում. «Մշտական բնակութեան երբեք ոչ մի տեղ չեմ գնա: Ես ինձ հայ եմ համարում, քանի որ այդ տարիքից այստեղ եմ ապրել, կրթութիւն ստացել, ընտանիք կազմել: Ինձ այստեղի օդն ու ջուրը հայ են դարձրել»:

«Քորէացի որբ»... հաւանաբար շատերս լսած կը լինենք այդ արտայայտութիւնը: «Ես երբեք չեմ նեղուել որբ բառից: Երբ իմացայ, որ ես որդեգրուած եմ, շատ մեծ ակնածանքով լցուեցի հայ ծնողներիս հանդէպ, քանի որ եթէ նրանք չլինէին, չգիտեմ իմ կեանքը ինչպէս կը ստացուէր... Երեւի սա էլ իմ ճակատագիրն է...»:



### ՉԱԲԱԿԴ Ե՞ՐԲ ՍՈՐԿԵՑԱԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Ո՞վ չի փափաքիր, որ իր գաւակը զարգանայ եւ կարենայ տեղեակ ըլլալ թեքնոյոճի բոլոր արդիական միջոցներէն: Շատ անգամներ հարց կու տանք, թէ արդեօք համակարգիչը միջոց մըն է գիտութիւն ապահովելու կամ պարզապէս ժամանցի եւ զբաղումի միջոց մըն է:

Իրականութեան մէջ, համակարգիչին առջեւ ժամեր նստելով ոեւէ պզտիկ հանճար չի դառնար, ոչ ալ կարողութիւն կ'ունենայ արագօրէն կարդալու, որովհետեւ համակարգիչը առարկայ մըն է, գոր կրնանք գործածել թուաբանութիւնն ու այլ գիտական ու գրական նիւթերը աւելի հետաքրքրական, գուարճալի ու դիւրին ձեւով ստրկելու: Համակարգիչը միեւնոյն ժամանակ միջոց մըն է, որ պզտիկներուն առիթ կու տայ մի քանի լուծումներ ընտրել եւ արդիւնքները ուսումնասիրել, որուն որպէս արդիւնք մէջտեղ կու գայ տարբեր ընտրանքներու հետ վերաբերելու կարող պզտիկ մը:

Սկսելէ առաջ պէտք է լաւ ձեւով ընտրել գաւակը դաստիարակելու յարմար ծրագիրներ, որովհետեւ կրնայ պատահիլ, որ գաւակը ժամերով նստի համակարգիչի պատահաւոր դիմաց, խաղայ որոշ խաղ մը, որմէ որեւէ օգուտ չստանար: Անշուշտ պէտք է նշել, թէ համակարգիչի գործածութիւնը կախեալ է պզտիկին տարիքէն. իւրաքանչիւր պզտիկի տարիքի համար գոյութիւն ունին յարմար խաղեր ու զբաղումի առարկաներ:

9 ամսականէն մինչեւ 2 տարեկան.

Այս տարիքին, խնամող ծնողները կը քաջալերեն իրենց փոքրիկները, անոնց տրամադրելով խորանարդաձեւ խաղալիքներ, նկարով զարդարուած գիրքեր եւ ոչ թէ բարդ գործիքներով խաղալիքներ: 2 տարեկան.

Այս տարիքին, երեխաները կը սիրեն իրենց ծնողները ծաղրել: Եթէ պզտիկ մը տեսնէ, թէ հայրը համակարգիչը կը գործածէ, ան պիտի փափաքի նոյնը կատարել: Սակայն, այդ տարիքին ան պէտք է զբաղի այլ փլասթիքէ պատրաստուած պուպիկներով ու խաղալիքներով:

3-4 տարեկան.

Այս տարիքին, համակարգիչը մասամբ յարմար կ'ըլլայ վարժութիւններ կատարելու, ինչպէս գիրերուն տեղերը ստրկիլ, գրչները գաւազանել, գիտնալ պզտիկն ու մեծը,

երկարն ու կարճը: Հետեւաբար, ծնողք հարկ է ընտրեն համակարգիչի այնպիսի ծրագիրներ, որոնց միջոցով գաւակը կարողութիւն կ'ունենայ այդ հմտութիւնները զարգացնելու: Ինչպէս նաեւ գոյութիւն ունին այլ ծրագիրներ, որոնք կը ծառայեն ընթացիկութիւնը զօրացնելու: Պզտիկիդ օգնելու համար, նստիր իր կողքին եւ թոյլ տուր, որ ուսուցիչի դերը առնէ, որպէսզի քեզի ստրկեցնէ ինչպէս կը ներկեն, գիրերու կը ծանօթացնեն կամ գծել կը ստրկեցնեն:

5-6 տարեկան.

Այս տարիքին, երեխան կը սկսի լուրջ դասերու սկսիլ երբ մուտք գործէ նախակրթարանի առաջին դասարան: Համակարգիչը տեղեկութիւններու աղբիւր կը հանդիսանայ պզտիկին համար, գոյութիւն ունին փոքրիկներու յատուկ համայնագիտարաններ, որոնց մէջ կարելի է գտնել իրենց յատուկ նկարներ: Ինչպէս նաեւ համակարգիչի միջոցով այս տարիքի պզտիկ մը կրնայ գրել ու գաղափարները բառերու վերածել:

7-10 տարեկան.

Այս տարիքը ամէնէն յարմար տարիքն է համակարգիչի գործածութիւնը ստրկելու: Այս տարիքին, պզտիկները կը հասկնան, թէ կրնան որոշ դժուարութեամբ խաղեր խաղալ համակարգիչի մեքենային միջոցով:

Սակայն հոս հարկ է նշել, որ այս տարիքին փոքրիկը կը սկսի ընտրել համակարգիչի իր սիրած յայտագիրները, որոնք կրնան պարունակել բռնութեան եւ անվայել տեսարաններ: Այս պատճառով, հարկ է հսկել եւ ուղղել զինք, հետեւաբար, նախընտրելի է պզտիկին հետ խաղալ, որպէսզի զինք ճիշդ ուղին առաջնորդես:

Ծառայութիւն մը մատուցէ գաւակին՝ ընտրելով իր տարիքի յարմար, իր ձիրքերն ու կարողութիւնները զարգացնող երկրներ: Նախընտրելի է նաեւ համակարգիչը տան մէջ այնպիսի տեղ մը դնել, ուր ընտանիքին բոլոր անդամները կրնան հաւաքուիլ, այսպիսով պզտիկը չ'առանձնանար իր սենեակին մէջ: Ինչպէս նաեւ հարկ է սահմանուած ժամանակ մը դնել, որուն ընթացքին երեխան արտօնուած է համակարգիչը գործածել, որպէսզի այդ գործիքը ժամանակի սպառման առարկայ չ'դառնայ:

### ԱՅՍՕՐ ՍՈՐԿԵԼԻՔ ԴԱՍԵՐ

\*Պէտք է ստրկիմ, թէ իսկական երջանկութիւնը միշտ իմ նպատակներս յաջողցնելու մէջ չի կայանար, այլ ստրկելով, թէ պէտք է քաջալերեմ այն արդիւնքները, զորս ձեռք կը բերեմ:

\*Պէտք է ստրկիմ, թէ հարուստ ըլլալու համար ամէնէն շատը ունենալը չէ, այլ ամէնէն քիչին կարօտիլը:

\*Պէտք է ստրկիմ, թէ անօգուտ է ինքզինքս ուրիշներուն հետ բաղդատել, որովհետեւ ինձմէ աւելի լաւ կամ աւելի գէշ անձեր միշտ ալ գոյութիւն պիտի ունենան:

\*Պէտք է ստրկիմ, որ վստահութիւն կերտելը տարիներու կը կարօտի, մինչ այդ կրնայ մի քանի երկվայրկեաններու ընթացքին քանդուիլ:

\*Պէտք է ստրկիմ, թէ գոյութիւն ունին մարդիկ, որոնք շատ կը սիրեն զիս, բայց պարզապէս չեն գիտեր ինչպէս արտայայտել իրենց զգացումները:

\*Պէտք է ստրկիմ, թէ չեմ կրնար մէկու մը ստիպել զիս սիրէ, այլ պէտք է ես ինքզինքս սիրցնեմ:

\*Պէտք է ստրկիմ, թէ ամէնէն արժէքաւոր բանը այն չէ, թէ ի՞նչ ունիմ կեանքիս մէջ, այլ՝ ո՞վ ունիմ կեանքիս մէջ:

\*Պէտք է ստրկիմ, թէ մի քանի երկվայրկեանի մէջ կարելի է ինծի սիրելի անձ մը վիրաւորել, սակայն տարիներ կ'առնէ մինչեւ այդ վէճը բուժուի:

\*Պէտք է ստրկիմ, թէ դրամը ամէն ինչ կը գնէ, բացի առողջութենէն եւ երջանկութենէն:

\*Պէտք է ստրկիմ, թէ երբ ես տխուր եւ ջղային եմ, այդ իրա-

ւունք չի տար ինծի՝ իմ շուրջս գտնուող անձերը տխրեցնելու:

\*Պէտք է ստրկիմ, թէ անկեղծ բարեկամները հազուադեպ կը գտնուին: Հետեւաբար, երբ գտնեմ հատ մը, իսկական գանձ մը գտած կ'ըլլամ:

\*Պէտք է ստրկիմ, թէ միշտ կարեւոր չէ որ ուրիշները ներեն ինծի, այլ ես ալ պէտք է ինքզինքս ներել գիտնամ:

\*Պէտք է ստրկիմ, թէ երջանկութիւնը որոշում մըն է: Պէտք է որոշեմ այսօր ուրախ ըլլալ իմ ունեցածներովս եւ իմ գտնուած վիճակիս մէջ, եւ ոչ թէ տխրիմ կամ նախանձիմ, որովհետեւ կան բաներ՝ զորս չունիմ:

\*Պէտք է ստրկիմ, թէ անոնք որոնք, առանց հետեւանքները նկատի առնելու, անկեղծ են իրենք իրենց անձին հետ, անոնք են որոնք կը յաջողին կեանքի մէջ:

\*Պէտք է ստրկիմ, թէ պիտի հնձեմ այն ինչ որ ցանեմ. եթէ բամբասանք ցանեմ, կասկած պիտի քաղեմ, իսկ եթէ սէր ցանեմ, երջանկութիւն պիտի հնձեմ:

\*Պէտք է ստրկիմ, թէ պէտք է ուշադիր ըլլամ իմ մտածումներուս, որովհետեւ անոնք բառերու կը վերածուին: Պէտք է ուշադիր ըլլամ իմ բառերուս, որովհետեւ անոնք գործերու կը վերածուին:

Պէտք է ուշադիր ըլլամ իմ գործերուս, որովհետեւ անոնք բնաւորութիւններու կը վերածուին: Պէտք է ուշադիր ըլլամ իմ բնաւորութիւններուս, որովհետեւ անոնք նկարագրի կը վերածուին:

Պէտք է ուշադիր ըլլամ իմ նկարագրիս, որովհետեւ այդ իմ ճակատագիրս կը դառնայ:

### ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԷՆ ՄԵԿՈՒՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ

Իմաստուններէն մէկուն այցելութիւն տուած ժամանակ հարց տուի անոր՝ զիս շփոթի մատնող հարցերուն մասին:

Ան ըսաւ. «Ինչի՞ մասին կ'ուզես հարցնել»:

Ըսի. «Ի՞նչ է մարդկութեան մէջ գտնուող ամենէն ապշեցուցիչ եւ զարմանալի բանը»:

Պատասխանեց. «Մարդ արարածը կը ձանձրանայ մանկութենէն, կ'աճապարէ մեծնալու, ապա կը ցանկայ դարձեալ մանուկ դառնալ: Իր առողջութիւնը կը կորսնցնէ դրամ հաւաքելու, ապա դրամ կը ծախսէ առողջութիւն վերստանալու: Մտահոգութեամբ կը մտածէ ապագային մասին, կը մոռնայ ներկան, եւ հետեւաբար, կ'ապրի ոչ ներկան եւ ոչ ալ ապագան: Կ'ապրի կարծես բնաւ պիտի չմեռնի, եւ կը մեռնի՝ կարծես բնաւ չէ ապրած»:

Մի քանի լուռ վայրկեաններ անցնելէ ետք, հարցուցի. «Ի՞նչ են կեանքի այն դասերը, զորս մարդ արարածը պէտք է ստրկի»:

Ան պատասխանեց. «Թող

ստրկի, որ կարելի չէ անձ մը ստիպել՝ որ զինք սիրէ, միայն կարելի է աշխատիլ որ ինքզինք սիրցնէ: Թող ստրկի ինքզինք չբաղդատել ուրիշներու հետ, թող ստրկի հասկցող եւ ներող ըլլալ: Թող ստրկի, որ կրնայ իր սիրած անձերուն խոր վէճերը պատճառել մի քանի վայրկեաններու մէջ, սակայն գանոնք բուժելու համար՝ այդ անձերը կրնան երկար տարիներու պէտք ունենալ: Թող ստրկի, որ հարուստ մարդը ան չէ որ շատ բան ունի, այլ ան որ քիչ բանի պէտք ունի:

Թող ստրկի որ գոյութիւն ունին անձեր, որոնք զինք շատ կը սիրեն, բայց անոնք չեն գիտեր այդ սէրը եւ զգացումները արտայայտել: Թող ստրկի որ երկու անձեր կրնան միեւնոյն առարկային նայիլ, բայց բոլորովին տարբեր տեսնել զայն: Թող ստրկի որ բաւարար չէ ուրիշներ իրեն ներեն, այլ պէտք է նաեւ ինքն իրեն ներէ»:

Շնորհակալութիւն յայտնեցի իրեն ու մեկնեցայ:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**

**ՓԱՍՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ՇԱՍԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՍԱՐ**

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՆՈԱԶԱՅՆԵԼ**

**(626) 797-7680**



### ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԶԱՐԱԲԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ

Շարունակում էք 6-էն

նի փոխարարաբերությունների սկիզբը կը սկսի 2008ին, երբ նախագահ Ապտուլլա Կիլի, Երևան այցելեց հայ-թուրք ֆուտբոլի մրցախաղին, անձամբ ներկայ գտնուելու համար: Աննախընթաց քայլ մը, թուրք դիվանագիտության կողմից, վասն զի, առաջին անգամն ըլլալով, քմեյական թուրքիոյ հիմնումէն ասդին, թուրքիոյ նախագահ մը Հայաստան կ'այցելէր: Այսպէս, Հայաստան եւ թուրքիա փոխարարաբերութիւնները որակուեցան որպէս «football diplomacy»:

Նախագահ Ռուպերթ Քոչարեանի վարչակարգին օրով սկսած հայ-թուրք բանակցութիւնները, նախագահ Սերժ Սարգսեանի օրով յանգեցան գոյգ «Protocol»-ներու պաշտօնական համաձայնութեան, եւ ստորագրութեան: Զիւրիխ, ամերիկեան, ռուսական եւ ֆրանսական արտաքին գործոց նախարարներուն, Զուրիցերիոյ իշխանութեանց միջնորդութեամբ: Protocol-ները ուրիշ բան չէին եթէ ոչ ուղեցոյց-քարտէս մը (road map) իրագործելու համար երկու ծրագիր:

ա) Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ 1993-էն ասդին փակ սահմանները բանալ, բ) բնական, դիւանագիտական յարաբերութիւն ստեղծել երկու երկիրներու միջեւ: Առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու աւեցնենք, որ այդ երկու Protocol-ները, համապատասխան երկու երկիրներուն խորհրդարաններու ստորագրութեան կը կարօտէին որպէսզի ի գորու դառնային:

Ուաշինկթըն գործօն կերպով թիւրքիոյ կը կանգնէր թուրք եւ հայ փոխարարաբերութեանց բարելաւման: Նախ, առաջնորդած իր սնտեսական եւ սթրատեգիկ շահերէն, Հարաւային Կովկասեան գօտին կ'ուզէր ապահով եւ կայուն տեսնել: Մասնաւորաբար սթրատեգիկ պատճառներով, մասնաւոր երբ ի մտի ունենանք որ Փաքիստանի հետ իր յարաբերութիւնները ձգտուած վիճակի մէջ կը գտնուէին: Հարաւային Կովկասը միակ անցքն էր Աֆղանիստան գէնք-գինամթերք ու ուժ հասցնելու:

Նախագահ Օպաման, անձամբ, իր կշիռը դրած էր վերոյիշեալ բանակցութեան ետին: Ինչպէս գիտենք, ան նախագահ ընտրուելէն առաջ, յստակ բառերով բացէ ի բաց յայտարարած էր, որ Օսմանեան իշխանութեան օրով, 1915ի հայոց ջարդերը «Ցեղասպանութիւն» էին: Եւ երբ ան նախագահ ընտրուեցաւ, իր որդեգրած արտաքին քաղաքականութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւէր իսլամական աշխարհի համակարանքը: Այդ նպատակին իրագործման համար թուրքիան, որպէս իսլամ եւ տեմոքրատ երկիր, կարեւոր տեղ մը կը գրաւէր: Այդ էր պատճառը, որ ան, նախագահ ընտրուելէն անմիջապէս ետք, Անքարա այցելեց ու թուրք խորհրդարանի մէջ ելոյթ ունեցաւ: Այդ ձեւով նախագահ Օպաման որոշ չափով մեղմացուց երկու երկիրներու միջեւ ձգտուածութիւնը որ յառաջացած էր 2003-ին. Ամերիկայի Իրաքի վրայ պատերազմ շղթայագերծելու ատեն թրքական խորհրդարանը դէմ բուժարկեց, արգելք հանդիսացաւ, որ ամերիկացիները թուրք հողամասը օգտագործել կարենան ընդդէմ Իրաքի:

Ամերիկեան Քոնկրէսին կողմէ հայոց Ցեղասպանութեան բանաձեւը սեղանի վրայ դնելը «դիւրմա»-ի առջեւ կը դնէր նախագահ Օպաման: Եւ եթէ ան հարցերուն տուած իր խոստումը ուզէր յարգել, Ցեղասպանութեան ճանաչումը Քոնկրէսին կողմէ քաջալերէր, ան ուղղակի թուրքիոյ գայրոյթը իր վրայ պիտի հրաւիրէր առանց այլեւայլի:

Ուստի հարկ էր գտնել ճարտար ձեւ մը՝ խոստափելու համար ցեղասպանութեան ճանաչումէն: Այսինքն՝ Քոնկրէսի կողմէ բանաձեւը անցընելէ:

Ճերմակ Տունն ու Պետական Քարտուղարութիւնը մեծ ճարտարութեամբ օգտագործեցին Հայաստան եւ թուրքիա բանակցութիւնները ըսելու համար, որ հարկ չկար հայոց Ցեղասպանութեան խնդիրը Քոնկրէսի մէջ արծարծելու, որովհետեւ նման քայլ մը կրնար խանգարիչ դեր խաղալ, գործնական գեանի վրայ, երկու երկիրներու միջեւ յառաջ տարուող հաշտութեան գործընթացին:

Նախագահ Օպաման, «Մեծ Եղեռն» բառը գործածելով եւ այլ ճարտար դարձուածքներով պիտի խոստափէր «ցեղասպանութիւն» որակելէ հայոց Ցեղասպանութիւնը:

Ռուսիան, իր սեփական հաշիւներով համաձայն պիտի ըլլար Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ համաձայնութիւն գոյացնելու ճիգերուն, յատկապէս վրաստանը լուսանցքի վրայ հրելու եւ տկարացնելու դիտաւորութեամբ: Նաեւ Ռուսիան ունէր այն դիտաւորութիւնը որ բանակցութիւններու ձախողութեան պարագային, ի պահանջեալ հարկին, առիթը կ'ընծայուէր իրենց սեպ խրելու թուրքիոյ եւ Ատրպէյճանի միջեւ:

«Protocol»-ներու ճակատագիրը, պաշտօնապէս, երկու կողմերու միջեւ ստորագրուելէն անդին չանցաւ: Մնաց թուրքի վրայ պարզապէս: Թուրք խորհրդարանը չվաւերացուց գայն, տեղի տալով Ատրպէյճանի եւ թուրք ընդդիմադիր հոսանքներու գորեղ ճնշումներուն: Պատրուակ: Առանց ի նպաստ Ատրպէյճանին, Ղարաբաղի հիմնահարցով, Հայաստանի գիշումներուն՝ Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ փոխարարաբերութիւնները կը շարունակէին մնալ անշարժ:

Ուրիշ խօսքով, հայ եւ թուրք փոխարարաբերութիւնները պատանդ դրուեցան Ղարաբաղի լուծման: Բան մը՝ որ ոչ մէկ կապ ունէր Protocol-ներու հետ: Minsk-ի Group-ն էր որ այդ խնդրով կը զբաղէր:

Ինչո՞ւ վարչապետ էրտողան տեղի պիտի տար Ալիեւի ճնշումներուն: Որքան որ թուրքիա պէտք ունի Ատրպէյճանին, նոյնքան եւ Ատրպէյճան կարիք ունի թուրքիոյ՝ իր նաւթի եւ կազի արտածման եւ այլ նպատակներով: Ինչ օգուտ ունի յայտարարել, թէ թուրքիան, ներառեալ Հայաստան, իր դրացիներուն հետ գէրօ-խնդիր կ'ուզէր ունենալ, առանց աւելի լայն ճիգի գործ դնելու լուծելու համար դարաւոր վէճեր՝ Հայաստանի խնդրին նման: Եթէ Հայաստան պիտի ընդունէր Ղարաբաղի հարցով Ատրպէյճանին անտեղի գիշումներ կատարել, տասնվեց տարի սպասելու կարիք չունէր: Այդ մէկը եղած է ըլլալ, տասնվեց տարիներ առաջ, երբ նոյն պատուակով թուրքիան սահմանները գոցեց:

Թուրք դիվանագիտական լա-

րախաղացութեան վերաբերեալ բան մը եւս աւելցնենք: Protocol-ները ստորագրուելէ անբմիջապէս ետք, վարչապետ էրտողան իր շունչը Պաքու առաւ: Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ, Պաքու, մամլոյ միացեալ հաղորդակցութեան ատեն ան հետեւեալը ըսաւ. «Սահմաններու փակումը արդիւնք է, իսկ Ղարաբաղի գրաւումը՝ պատճառ: Առանց գրաւումի դարման, դունելը պիտի չբացուին»: Միւս կողմէ, նուազ քան մէկ ամիս ետք, թուրքիոյ արտքին գործոց նախարար Ահմէտ Տաւութօղլու, Ուաշինկթըն, Ամերիկա, հակասական ուրիշ յայտարարութիւն մը պիտի ընէր. «Մենք կը փափաքինք իրագործել իրավիճակ մը, Կովկաս, որ ըլլայ բարգաւաճ եւ խաղաղ: Եւ այդ իմաստով, մենք ամբողջութեամբ յանձնառու ենք Հայաստանի հետ մեր յարաբերութիւնները բնականոն դարձնելու գործընթացին»:

էրտողան-Տաւութօղլու ունեցած իրարու հակասական կեցուածքները, խորքին մէջ դերերու բաժանում մըն է:

Հարաւային Կովկասի տարածաշրջանին վերաբերեալ Ամերիկայի առած խաղաղասիրական նախաձեռնութիւնը կ'իշխայ տարածաշրջանը խաղցնելու շրջագծէն ներս: Ուաշինկթըն, սնտեսական եւ սթրատեգիկ կարեւոր շահեր ունի այդ գօտիին մէջ: Թուրքիան եւ Հայաստանը հաշտեցնելու մէկ օղակը կը հանիսանար այդ նպատակին իրագործման համար: Ղարաբաղի հարցը, անշատուած էր այդ գործընթացէն: Բան մը՝ որ Ատրպէյճանը դժգոհ պիտի ձգէր, եւ ան թուրքիոյ միջոցաւ ձախողութեան պիտի մատնէր Ամերիկեան նախաձեռնութիւնը: Ատրպէյճանի հաշիւով, երբ թրքական եւ հայաստանեան սահմանները բացուէին եւ Հայաստան դուրս գար իր նեղ վիճակէն, այլեւս շահագրգռուած պիտի չըլլար Ղարաբաղի հարցին շուտափոյթ լուծումով: Այդպիսի լծակի մը, Ատրպէյճան չուզէր, որ Հայաստան տէր դառնայ:

Ռուսիան, իր կարգին, կը թուի թէ իր սառած վիճակին մէջ կը փափաքի պահել Ղարաբաղի իրավիճակը: Հակակշռուած անկայուն վիճակ մը (controlled instability) ձեռնառու կը թուի ըլլալ Մոսկուայի համար՝ միաժամանակ արդ-

իական գէնքեր տալով Հայաստանին եւ Ատրպէյճանին, միւս կողմէ ռուսական Կիւմրիի գինուորական խարխիւին մնացած ժամկէտը մինչեւ 2044 երկարելով: Կարեւոր է նկատողութեան առարկայ դարձնել այն կէտը, որ մինչ 1995ի պայմանագիրը, խորքին մէջ, Հայաստանի ապահովութիւնը կ'երաշխաւորէր թուրքիոյ դէմ: Վերջին պայմանագիրը, յատուկ յօդուած կը պարունակէ իր մէջ, որ հուլիան մէջ յաւելուածաբար Հայաստանի հողային ամբողջականութիւնը կ'երաշխաւորէր Ատրպէյճանի յարձակման պարագային:

Այսպէս, կարելի չէ լրիւ թափանցել ռուսական դիվանագիտական դիտաւորումներուն մէջ: Չըրչիլ իրաւամբ ըսած է հետեւեալ դիպուկ խօսքը. «Russia is a riddle mysteriously wrapped up in an enigma», որ թարգմանաբար կը նշանակէ, թէ Ռուսիան հանելուկ մըն է որ խորհրդաւոր կերպով փաթեթուած է առեղծուածի մը մէջ:

Ներկայ պայմաններուն մէջ դժուար է Կովկասի մէջ մեծ բախում մը երեւակայել առանց Մոսկուայի հաւանութեան:

Մինչ Ղարաբաղի սահմանային գօտիի վրայ, առօրեայ բախումները կը մագլցին, Ատրպէյճանի նախարարականներով, դաշտի վրայ, օրէ օր, ընդհանուր կացութիւնը անզսպելի կը դառնայ: Ազերիները իրենց նաւթային շահերէն յոփացած կը խորհին թէ ժամանակի սլաքը իրենց ուղղութեամբ կը շարժի:

Պատմութեան մէջ կան շատ մը բախումներ, որոնք անմիջական լուծում չունին կամ չեն ունեցած: Օրինակ՝ Հիւսիսային Իսլանտայի, Պաղեստինի, Կիպրոսի, Քաշմիրի եւ այլ հարցերը:

Մեզի համար կը թուի, թէ Ղարաբաղի հիմնահարցը, ներկայ աշխարհի ամենակնճոռոտ հարցերէն մէկն է: Ան չունի անմիջական լուծում: Պատերազմն ալ երկար հաշիւով լուծում մը չի կրնար բերել: Ինչ որ հաւանականօրէն գոյատեւէ, այն իրավիճակն է որ յարաբերական խաղաղութիւնը կամ կիսա-պատերազմական դրութիւնը շարունակուի, ընմիջուած ատենատեն ժամերու տաք կռիւներով:

Մինչ այդ, Հայաստան իր մէջքին կանգնած ունի Սփիւռքը, իր ամբողջ կարելիութիւններով:

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ցաքուզի, թենիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*  
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450







### ՄԱՐԻԱ



ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆ

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահը, որ պատահեցաւ Դեկտեմբեր 22ին: Յուղարկաւորութիւնը եւ թաղումը տեղի ունեցան Դեկտեմբեր 24ին:

- Սգակիրներ՝
- Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեան եւ զաւակները Յարութ եւ Անի
- Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Մարի Աճէմեան եւ զաւակը Աւետիս
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան եւ զաւակները Ռաֆֆի եւ Գոհար
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սառա (Սեդա) Գրիգորեան եւ զաւակները Աբգար եւ Կասիա
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ալլա Աճէմեան եւ զաւակները, Մարիամ, Միքայէլ, Տանիէլ, Գաբրիէլ, Ղազար
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Արմինէ Աճէմեան եւ զաւակները Ենովք եւ Նարեկ
- Թողը Սեւակ եւ Անժէլ Գրիգորեան եւ Կարօ
- Քոյրը՝ Տիկ. Ագապի Քէլէշեան եւ զաւակները
- Քեռայրը Տիար Ետուար Պապիքեան
- եւ համայն Համասեան, Սարգիսեան, Աճէմեան, Սայքալի, Կարաթորոսեան, Գրիգորեան, Ղազարեան, Մխիթարեան, Պապիքեան, Գոճաւազեան, Քէշիշեան, Իշխանեան, Փէլթէքեան, Պաճազարեան, Յակոբեան եւ Աթհրօլ

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել «Մասիս» Շարքաքերքի ֆոնտի

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Սրտի դառն կսկիծով իմացանք Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ Սեդրակ Աճէմեանի մօր ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահը որ պատահեցաւ Դեկտեմբերին 22ին: Յուղարկաւորութիւնն ու թաղման արարողութիւնը տեղի ունեցան Դեկտեմբեր 24ին: Մեր խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Սեդրակ Աճէմեանին:

«Մասիս»ի Խմագրութիւն եւ անձնակազմ Նոր Սերունդ Մշակութային Միութիւն

### ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՆՐԱ ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ԵՐ

Շարունակուած էջ 13-էն

ման, Մերձաւոր Արեւելքի հայկական կազմակերպութիւններին աջակցելուն, Մխիթարեան Միաբանութեան Ս. Ղազարի Մայրավանքին օգնելու եւ բազմաթիւ հրամայապահանջ, ազգաշահ խնդիրներ լուծմանն էր ձեռնամուխ Վ. Համագապեանը, խնդիրներ, որոնք Սփիւռքահայութեան հետ կապի կոմիտէում պաշտօնավարման (1964-1985) ժամանակաշրջանում գրեթէ անլուծելի չէին եւ չէին էլ կարող լինել, որովհետեւ կոմիտէի Ոսկեղարը, կարելի է վստահօրէն ասել, սկսուել եւ շարունակաբար զարգացում էր ապրել նրա անմնացորդ հոգածութեան շնորհիւ: Անժխտելի է հայ մամուլի դերակատարութիւնը եւ ընդհանրապէս տպագրման ոլորտը սփիւռքեան գաղթավայրերում՝ ի նպաստ հայաստանագրութեան: Վ. Համագապեանը կարողանում է նպաստել նաեւ գրահրատարակչական ոլորտի զարգացմանը՝ հայ գրքի եւ մամուլի տարածման կարեւորագոյն կենտրոններ գործուղելով հայաստանցի փորձառու հրատարակիչներին, տպարանագործներին:

Եւ իբրեւ Սփիւռքը լիարժէք

ճանաչող ու Սփիւռքի ներուժը լիարժէքօրէն գնահատող գործիչ, նրա շնորհիւ, սփիւռքահայութեան հետ շփման, յարաբերակցման եզրերը օրաւոր ընդլայնուած էին, մերօրեայ տեսանկիւնից նոյնիսկ զարմանահարուց իրողութիւններ արձանագրում: Ֆրանսահայ անուանի մտաւորական Շաւարշ Միսաքեանի կարգախօսը՝ «Թող գործը խօսի», ամենայն ճշգրտութեամբ վերաբերում է վարդգէս Համագապեանին: Խորին խորհրդածրոյց էր լցուած օտարութեան մէջ մահացած մեր ժողովրդի պանծալի զաւակների սրբազնացած յիշատակի նկատմամբ, երբ 19 Փետրուար, 1969 թուակիր նամակով դիմում էր ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Բ. Մուրադեանին՝ յորդորելով «Մեծաց աճիւնները» (Ա. Արփիարեանի, Ե. Օտեանի, Վ. Թեքեանի, Միրանյալի, Զօրավար Անդրանիկի) Հայաստան փոխադրել: «Սփիւռքահայ առաջադիմական կազմակերպութիւնների եւ հայրենասէր միութիւնների ներկայացուցիչներ, ականաւոր մտաւորականներ, գրողներ եւ արուեստագետներ բազմաթիւ առիթներով գրաւոր եւ բանաւոր խնդրել են, կոմիտասի օրինակով, նրանց աճիւնները նոյնպէս հայրենադարձել եւ

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի վարչի Մարմինը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեանին, իր մօր՝ ընկերուհի ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահուան առիթով: Շրջանս սրտի խոր կսկիծով կը բաժնէ ընտանեկան համայն պարագաներուն եւ հարազատներուն վիշտը, մաղթելով իրենց արեւաշատութիւն եւ առողջութիւն, վառ պահելու համար մեր ընկերուհին, ամբողջ կեանքի ընթացքին կրած կուսակցականի ջանք եւ հայրենասիրական ոգին: Թող իր յիշատակը վառ մնայ: Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարչի Մարմին

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Ընկերուհի ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ.ի «Փարամագ» մասնաճիւղի վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, ի մասնաւորի Ընկ. եւ Ընկհ. Սեդրակ եւ Ալին Աճէմեանին, Ընկ. եւ Ընկհ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեանին, Ընկ եւ Ընկհ. Կարօ եւ Սեդա Գրիգորեանին:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Ընկերուհի ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ.ի «Արսէն Կիտուր» մասնաճիւղի վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. եւ Ընկհ. Սեդրակ եւ Ալին Աճէմեանին, Տէր եւ Տիկ. Ընկ. Յովսէփ եւ Մարի Աճէմեան եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Ընկերուհի ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ.ի «Սպարհ Գիւլ» մասնաճիւղի վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեանին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Ընկերուհի ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահուան տխուր առիթով Պաթոն Ռուսի Ս.Դ.Հ.Կ. «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղի վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեանին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնանց վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեանին, Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեանին, Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սեդա Գրիգորեան եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՄԱՐԻԱ ԱԶԻԲՅԱՆի մահուան տխուր առիթով Հայ-Ամերիկեան Խորհուրդի վարչութիւնը եւ անդամները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ալլա Աճէմեանին, համայն Աճէմեան ընտանիքին եւ բոլոր պարագաներուն:

ամբողջով հայրենի հողում: Հայրենի կառավարութեան ուշադրութիւնը ամբողջ սփիւռքահայութեան կողմից կը գնահատուի ջերմ երախտագիտութեամբ: Անշուշտ, աւելի քան տեսանելի է, որ Վ. Համագապեանի բաղձանքը, ի բացառեալ Զօրավար Անդրանիկի, անգործածելի է մնացել, իսկ թէ համագրային նշանակութիւն եւ խորհուրդ ունեցող խնդիրը ե՞րբ է բարձրաձայնուել, զարմանալի է, բայց փաստ... Մի պահ վերացարկման տրամաբանութեամբ շրջենք պատմութեան անցեալ էջերը եւ փորձենք պատկերացնել առանց Սփիւռքահայութեան հետ կապի կոմիտէի եւ մասնաւորաբար վարդգէս Համագապեանի հայանպաստ լրջախորհութեան արդեօք կը ժառանգուէ՞ր այն մնացուած ու... գրեթէ անիրագործելի: Հոգեւոր ժառանգութիւնից գատ, նաեւ Սփիւռքից ստացուող դրամական տարեկան հատկացումները (Գ.Գիւլպէնիկեան հիմնարկութիւն՝ 150 000 տոլար, Հայրենակցական միութիւնները՝ 50-60 հազար տոլար, Հայաստանի անուշտով կատարուած կտակներ, մեծա-

հարուստ, ազգային բարերարների նուիրատուութիւններ, Հայկական Բարեգործական Ընդհանուր միութեան տրամադրութեան տակ գտնուող Մելգոնեան եւ Մարկոսեան ֆոնդեր, ընդհանուր հաշուարկով աւելի քան 2 միլիոն տոլար եւ այլն) մեծապէս նպաստում էին Հայաստանում բազմաբնոյթ, մեծածաւալ գործունէութիւն ծաւալելուն: Այսպիսով, «Հայրենիք-Սփիւռք. կամըջող անուն. Վ. Համագապեան» փաստաթղթերի ժողովածուն՝ հրատարակուած վարդգէս Համագապեանի 100-ամեայ յոբելեանի առթիւ, ոչ միայն փաստաւորապէս, եզակի տեղեկութիւններ է պարունակում յիշեալ ժամանակաշրջանի Հայաստան-Սփիւռք ազգային-մշակութային, ինչպէս նաեւ արդիւնաւէտ գործարար առնչութիւններին վերաբերող, այլեւ իր տեսակի մէջ հանրագիտարանային նշանակութիւն ունի: Վարդգէս Համագապեանի գործունէութիւնը անշրջանցելի է. հայաստանագրութիւնը որպէս ճակատագիր կրող մտաւորականը, իրապէս, կամըջող անուն էր Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններում:



